



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

ստանձնել և տարածել նյութը ցանկացած մեդիայով կամ կրիչով
մեղմությամբ կամ օգտագործել առկա նյութը առեղծված համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

ԻՄԴԵՐԻԱՆԻԱՅԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՔԱՄԵՆ Լ ՀԱՅԱՍՏԱՆԸ





№ 7 ԳՐԱԴԱՐԱՆ „ՆՈՐ ԱԿՈՍԻ“ № 7

Պրովաբներ, բոլոր յեղերներ, միացե՛ք

9(47925)197

Ա. ԿԱՐԻՆՅԱՆ

Կ-32

Լրաց.

9(4/9)1 „1914-1918“

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Յ Ե Վ

ՀԱՅԱՍՏԱՆԸ


(Փաստեր, գոյումեմաներ)

A II
33461 606

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՐՈՒ

1924



պերիալիզմի յերկերեսանի բնույթը և նրա իսկական-
ղերը մանր ազգությունների նկատմամբ:

I

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

1914 թվականի մեծ պատերազմը սկսել են, ինչ-
պես հայտնի չե, բուրժուաները և կալվածատերերը:

Դրանք են տիրում աշտորվա Յեվրոպայում: Դրանք
ունեն խոշոր գործարաններ, հսկայական նավեր, մեծ
քանակությամբ հողեր և կալվածներ: Դրանցից ամենա-
հարուստ բուրժուաները պահում են իրենց դրամը
բանկերում և հենց այդ բանկերի միջոցով ել ստեղ-
ծում են ավելի խոշոր բուրժուական ընկերություն-
ներ, հենց այդ բանկերի ոգնությամբ ել ստեղծում են
նոր գործարաններ, յերկաթուղիներ, կալվածքներ:
Յեվրոպական բոլոր յերկրներում ել փաստորեն կառա-
վարում են բանկերը և բանկային բուրժուաները:
Դրանք են նշանակում նախարարներին և կառավար-
չական բարձր պաշտոնյաներին: Դրանք են վարձում
իրենց սպասավորող մոմուլի գործիչներին և մտավո-
րականներին, գրողներին զխոնականներին և քիսոռո-
շա ու վոյ քիսոռոշյա հոգեվորականներին:

Պատերազմից շատ առաջ յեղել են առանձին
մտավորական գործիչներ, վորոնք նախատեսել են պա-
տերազմը և միամտորեն ճիգ են արել կռվելու պատե-
րազմի հեղինակների դեմ:

Այդպիսի միամիտներից եր մասնավորապես
Ֆրանսիական սոցիալիստ՝ Ժան Ժորեսը, վորը պատե-
րազմի նախորդակին խարազանել և Ֆրանսիական
բուրժուաներին և ձայն և բարձրացրել իր հայրենի-

բռնակալների դեմ: Հենց դրա համար ել նա խարդախ կերպով սպանվել է Ֆրանսիական բուրժուազիայի մի վարձկանի ձեռքով:

Իր հերթին գերմանական, անգլիական, ամերիկյան բուրժուաները բանտ են նետել իրենց յերկրի սոցիալիստ միջազգայնականներին: Յեւ ռզտվելով իրենց հաղթական դրությունից, դրանք բոլորն ել միևնույն ձևով և միևնույն չափով վարակել են բանվորներին և գաղաղացիներին մարդատյացության այն թույնով, վոր կոչվում է սովորաբար «հայրենասիրություն»:

Անգլիական բուրժուան կոչ է արել անգլիական բանվորին կովել անգլիական հայրենիքի պաշտպանության համար:

Ֆրանսիական բուրժուան հրավիրել է Ֆրանսիական բանվորներին կովել Ֆրանսիական հայրենիքի պաշտպանության համար:

Միևնույն խոսքերը, միևնույն պատգամները նետել են գերմանական, բելգիական, ռուսական և ուրիշ բուրժուաները:

Ու բոլորն ել հանուն հենց այդ «հայրենիքի», — գումարել են դորքեր, պատրաստել են մահաբեր թնդանոթներ և ռազմանավեր ու նետել են միամիտ և խարված բանվորներին միմյանց դեմ:

Յեթե Ֆրանսիացի, գերմանացի ու մյուս բանվորներն իմանային թե ինչո՞ւ և ո՞ւմ համար են նրանք միմյանց կոտորում — ի հարկե, նրանք չեյին պատերազմի: Յեթե նրանք գիտենային, վոր Ֆրանսիական «հայրենասեր» բուրժուազիան ցանկանում է խլել գերմանացիներից քարածխային վայրերը, յեթե գեր-

մանական բանվորն իմանար, վոր կովում ե նոր հողերի բռնագրավման համար, յեթե անդլիական բանվորը գիտակցեր, վոր իր յերկրի բուրժուաները ցանկանում են խլել դերձանացիներից նրանց գաղութները — ի հարկե, վոչ մի կոխվ և վոչ մի պատերազմ չեր լինի:

Նրանք չգիտեյին վոչինչ — վորովհետև կոմունիստները բանառումն եյին, իսկ այսպես կոչված սոցիալ-դեմոկրատները և դրանց նման ուրիշ սոցիալիստները հավատացնում և համոզում եյին բոլորին, վոր պատերազմը մղվում ե «սուրբ Գաթակնեի», «Խայրե-ճիֆի» և «ազգի պաշտպանության» համար...

Յեվ ահա միմիայն այժմ ե պարզվում այդ բոլորը:

Այժմ արդեն աշխարհի նույն իսկ ամենահետին անկյունի աշխատավորը գիտե, վոր իրեն խաբել են, խաբել են բուրժուաները և յեպիսկոպոսները, խաբել են «հայրենասեր» գրողներն ու տերտերները, սոցիալ-դեմոկրատները և հեղափոխական կոչվող «ազգասերները»:

Առաջին անգամ պարզվում և այդ բոլորը Հոկտեմբերյան հեղափոխության մյուս որին, յերբ ուսաբանվորները դուրս են հանում ուսական ցարի և նրամինիստների պահարաններից «գաղսնի պայմանագրերը» և զանազան ուրիշ պաշտոնական թղթեր:

Որուս բոյլշևիկներն իսկույն և յեթ հրատարակում և տպագրում են բանվորական լրագրներում այդ գաղտնի թղթերը: Դրանից հետո բոլորն ել իմանում են, վոր պատերազմը սկսվել ե նոր հողերի գրավման համար: Ահա հենց այդ գաղտնի թղթերում ել գրված:

ե, վոր մեծ յեվրոպական պետությունները խոսք են տալիս միմյանց պատերազմը վերջանալուց հետո թալանած յերկիրները «արգար» կերպով բաժանել միմյանց մեջ: Հենց այդ թղթերում ել ասված է, վոր պատերազմից հետո Տաճկաստանը պիտի բաժան բաժան անվի:

Այդ պայմանագրերի հիման վրա Տաճկաստանի հարավային մասը պիտի ստանար Ֆրանսիան, Միջագետքը—Անգլիան, իսկ հյուսիսային մասը՝ ցարական Ռուսիան, Պարսկաստանի մի մասը պիտի անցներ Ռուսիային, իսկ մյուս մասը՝ Անգլիային: Յերբ տպվում են այդ «պայմանագրերը», ազդեցությունն այնքան մեծ է լինում, վոր նույնիսկ ըոյլշեմիկները հակառակորդները զարմանում և շշմում են: Դաշնակցական հայ տիրացուների ղեկավար՝ Ահարոնյանը սկսում է նույն իսկ իր գլուխը ձեծել և քննադատել «խաբեբա» անգլիացիներին և ցարին: Նա կարծես սկսում է հասկանալ, վոր «Հայաստանի փրկությունը» և «հայ ժողովրդի ազատագրումը» միմիայն պատրվակներ են յեղել—նրանց համար, վորոնք ցանկացել են Տաճկաստանից խլել նրա հողերը և նավթահանքերն ու ծածկել են սեփական ախորժակները «մարգասիրական» խոսքերի տակ:

Բայց և այնպես, չնայած ժամանակավոր այդ «զգաստության», և Ահարոնյանը, և նրա բոլոր մյուս դաշնակցական ընկերները վոչ միայն չեն սթափեցնում հայ ժողովրդին, այլ և ավելի մեծ յեռանդով կոչ են անում հայ գյուղացիներին կռվել յեվրոպական քուրժուանների հետ միասին ընդդեմ Տաճկաստանի:

Առաջին նվազ անհասկանալի յե, թե ինչու են

դաշնակցականներն անուժ այդ Բայց խնդիրը պարզվում է, յերբ մենք քննում ենք հայ «ազգասերների» իսկական բնույթն ու ելությունը:

Ամեն մի կուսակցություն պաշտպանում է այս կամ այն դասակարգի շահերն և պահանջները: Ընդհանուր խոսքեր և բառեր «ժողովրդի» ու «ազգի» մասին նու շատ է ասում, բայց այդ բոլորը միայն նրա համար, վերապահի կարողանա ավելի հաջողությամբ խարել միամիտ աշխատավորներին: Ամերիկայում, որինակ՝ ամենահարուստ—միլիոնատերերի կուսակցությունն ինքն իրեն անվանում է «գեմեկրատական»:

Ահա հենց դրա համար էլ մենք ուշադրություն չպիտի դարձնենք դաշնակցականների «հայրենասիրական» և «սոցիալիստական» յարլիկի վրա, այլ պիտի ԲԵԵԵԲ Երա ՏԵԵԲԵ Եվ իրական դասակարգային բնույթը:

II

ՈՎՔԵՐ ԵՆ ԴԱՇՆԱԿՆԵՐԸ

Խնդիրը հենց նրանումն է, վոր հայ ազգասեր և սոցիալիստ դաշնակցականներն էլ հայ բուրժուազիայի ներկայացուցիչներն են:

Բազու, Թիֆլիս, Մոսկվա, Պետերբուրգ, կովկասյան և ուսսական մեծ քաղաքներում շատ կան հարուստ հայ բուրժուաներ: Դրանք մի ժամանակ ունեյին և նաֆթահորեր, և գործարաններ, և խոշոր կալվածներ:

Այնքան ուժեղ էյին այդ հայ բուրժուաները, վոր նույն իսկ ուսսական պետական խորհուրդում ունեյին իրենց առանձին ներկայացուցիչը (Բազա

նաֆթատերերի կողմից) հանձին տխրահուշակ Պավել Ոսիփիչ Ղուկասովի *)»:

Ահա հենց այդ հայ բուրժուաներն էլ ունեյին ծառայողների և սպասավորների հսկայական մի խումբ: Այդ հայ բուրժուաներն անուժ եյին միևնույնն, ինչ վոր և նրանց յեվրոպացի յեղբայրները:

Հո չնային կարող դրանք ափաշկարա ասել բոլոր ժողովրդին, վոր իրենք իրենց շահի և իրենց զբաղանի համար են գործում: Յեթե այդպես անեյին, ել ձվ կը լսեր նրանց...

Հենց դրա համար ել հայ բուրժուաները ստեղծել են սեփական բուրժուական կազմակերպություն, վորը տեղին յեկած միջոցներով արդարացնում և սըրքագործում եր հայ բուրժուաների ձգտումները և պահանջները:

Դաշնակցական կուսակցությունը հայ բուրժուաների բոլոր ծրագիրները շղարշում եր «ժողովրդասիրական» և «հայրենասիրական» փքուն խոսքերով և

*) Այդ Ղուկասովը չնայած նրան, վոր շատ և շատ հարուստ մարդ եր և Պետերբուրգի Ազգային խորհուրդի անդամ, հայտնի յեր բոլորին, վորպես ազահ և սարսավելի ժլատ անձնավորություն: Պատերազմի որերին դա յել, դրա յեղբայրն ել իրենց հարստությունը կուտակել են մի քանի անգամ:

Իրագիկ մարգիկ պատմում են, վոր գրանց ուսական ցարական կառավարւթյանը Իրացանքեր յեկ ուղղմանյութեր են մատակարարել, այլ խոսով յեղել են յեվրոպական ընկերւթյունների կոմիսիոներներ: Ի՞նչ խոսք, վոր դրանք պատերազմի կողմնակիցներ պիտի լինեյին:

«ազգի միութիւն» անունով զսպում և սաստեցնում եր ըմբոստ բանվորներին:

Հայտնի յե, վոր մոտակա անցյալում Դաշնակցութիւնը պաշտպանել ե Բագվա հայ նավթատերերին և գործարանատերերին բոլոր գործադուլների ժամանակ—և նույն իսկ հալածել ե սոցիալիստ բանվորներին:

Մերթ ընդ մերթ ել, յերբ տեսել ե, վոր հեղափոխական շարժումն ավելի հզոր ե—նա ներկվել ե «սոցիալիստական» գույնով և այդպես ել մոտեցել ե Դաշնակցութիւնից խորշող բանվորներին:

Դա շատ խորամանկ և հմուտ կազմակերպութիւն ե, վոր միշտ ունեցել ե «на всякий случай» մի քանի ծրագրային կետեր, և տեղին համեմատ խոսել ե կա՛մ կղերական կամ բուրժուական, կամ ել սոցիալիստական լեզվով:

Ու ամեն անգամ մեջտեղ ե հանել այն, ինչ վոր ավելի դյուրին կերպով ե նպաստել հայ բուրժուազիայի հոգևոր «գերիշխանութիւնը»:

Սակայն յերբեք և վոչ մի պարագայում Դաշնակցութիւնը չի մոռացել իր հիմնական նպատակը—հայ բուրժուազիայի ազգայնական իդեալը:

Դաշնակցականների նախահայրը «Մշակ» լրագրի հիմնադիր Արծրունին ե:

Այդ մարդը շատ բան ե գրել տաճկահայ ժողովրդի ծանր կացութիւն մասին: Իր ժամանակ Արծրունին գիմել ե ուստական ցարական կառավարութիւնը և ինչպէս ե ցարից պատերազմ հայտարարել Տաճկաստանին և խլել նրանից հայկական նահանգները:

Դեռ այդ ժամանակ տաճկահայերը ինչպէս ե

Արծրունուն և Լուկասահայ գործիչներին չմիջամտել տաճկահայ գործերին և զուր տեղը չգրգռել տաճիկներին հայերի դեմ: Տաճկահայ հասարակության գրեթե բոլոր տարրերն էլ զգում էին, վոր ուստահայ բուրժուազիայի քաղաքականությունը մահաբեր և տաճկահայ ժողովրդի համար *):

Սակայն Արծրունին անուշադիր և թողել յերկրին ավելի տեղյակ մարդկանց հորդորները և շարունակել և ավանտյուրիստական իր քաղաքականությունը: Նրա հետ միասին այդ միևնույնն են արել նաև ուստահայ բոլոր մտավորականները:

Ինչպես:

Դրա պատասխանը տալիս և ինքը՝ Արծրունին իր «Թյուրքահայ հարցին» նվիրված հայտնի գրքույկի մեջ:

Դա այն հրապարակական դասախոսությունն է, վոր Արծրունին կարգացել և Թիֆլիսի Արհեստավորների ընկերության մեջ 1879 թվին մարտ 11-ին և Թիֆլիսի Սոբրանիայի դահլիճում միևնույն թվականի մարտ 25-ին: Իր ժամանակ այդ դասախոսությունը, ինչպես վկայում են 80-ական թվականների գործիչները, հսկայական շարժում և առաջ բերել:

Ահա հենց այդտեղ Արծրունին, վորքան էլ այդ տարրերնակ չի, շատ քիչ բան և ասում տաճկական կառավարության քաղաքականության մասին: Յեվ ընդհակառակը, զրբի զլեւվոր յեվ կեճեռճեռմեա մասը կազմում և Տաճկահայաստանի ճեճեռմեա հա-

*) Տես՝ Լ. Դաճիկյան՝ Մշակի քառասնամյակը (1872—1912). Թիֆլիս 1912. եջ 52:

բանալությունների, նրա բնական բերքների, հանքերի յեղ
նոխ վայրերի փառաբանությունը:

Հենց այդպիսի նկարագրությունը ել սկսում է
նա իր դասախոսությունը, այնինչ հոգեբանորեն ա-
վելի բնական կլիներ—յեթե Արծրունին այդ կողմի
վրա կանգնել հարևանցիորեն:

«Թյուրքահայերի սննդական կացության»-ը նը-
վիրված «ուսումնասիրությունից» մենք առաջին
հերթին տեղեկանում ենք, վոր Տաճկաստանը չափա-
զանց հարուստ են, նավթահանքերով և ուրիշ բերքերով
լեցուն հմայիչ մի յերկիր ե: «Նավթ»ը առհասարակ
մեծ տեղ է բռնում Արծրունու դասախոսության մեջ:
«Նավթը,— շեշտում է առանձին վոգեվորությամբ
Արծրունին,— շատ առատ է յերեվում յեղ այդ նյու-
թը կարելի յեր հավաքել հորերից, ինչպես Ռազվի
երջակայքում, մշակել նրան յեղ պատրասել նրանից
նուրբ Քոստզեն»: (Գր. Արծրունի — Թյուրքաց հայե-
րի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894 թ.
հջ 6):

Նույնքան կրակոտ տողեր են նվիրված և ու-
րիշ հանքերի նկարագրությանը: Խոսելով կիսկիմի
շրջակայքի մասին, Արծրունին հիշեցնում է, վոր
«խալալաքիների Սոգոմոն իմաստուն քաղապուրն
այդ վայրերից վոսկի եր բերել ասլիս, զործածելով
այդ նյութը Ֆերուսագենի սանարի շինության գա-
ղաբանների վրա»: (!!!)

Չենք յերկարացնի այդ նկարագրական տողերը:
Ինչպես տեսնում ենք «հայրենասեր» և «ազգա-
սեր» Արծրունին չափազանց հեռատես հայ բուրժուա-
ներ: Յեղ վորպես այդպիսին, նա շեշտել է հենց այն

կողմը, վորն ամենակարևորն եր կովկասահայ բուր-
ժուազիայի համար:

Նույն այդ ուղիով եւ ընթացել ե հետագայում
յեւ զաւանկեցական կազմակերպութիւնը: Սենտի-
մինտալ խոսքերը տաճկահայերի ծանր կացութեան
մասին, խմբապետական և տիրացուական ոռմանտիզ-
մը, այդ բոլորը հաճախ շղարշել ե կովկասահայ նա-
ցիոնալիստներին վերացական վարացույրով, սակայն
դաշնակցական շարժման վողջ եյութունը միշտ յեղել
ե խիստ պարզ և վորոշ,— և ավելի բան հողեղեն:

Ահա հենց զրա համար եւ տաճկահայերի ոգտի
համար գործող Դաշնակցութիւնը յերբեք չի ղեկա-
վարվել բուն տաճկահայ ժողովրդի կարծիքով կամ
տեսակետով: Դեռ ավելի ևս: Նա միշտ ել գործել ե
անկախ տանկահայ աշխատավորութիւնից յեւ միշտ
ղեկավարվել ե Քաղվեցի յեւ Թիֆլիսեցի յեւ արտա-
սահմանցան ուրիշ բուրժուական ե տեսակետներով:

Դրանով ել բացատրվում ե այն, վոր հենց այդ
քաղաքներում ե կազմակերպվել և ուժեղացել Դաշ-
նակցութիւնը, և այդ կենտրոններից ե ղեկավարել
նա վողջ ազգայնական շարժումը:

Ի վերջո «ազգային այն «բյուրոն», վոր պա-
տերազմի որերին կազմակերպվել եր Թիֆլիսում և
վորը փաստորեն ղեկավարել ե կամավորական շար-
ժումը և բանակցութիւններ ե վարել ցարական և
խմբերիալիստական դիվանագետների հետ— փաստորեն
յեղել ե հայ բուրժուազիայի ռազմական կազմակեր-
պութեան՝ աւանկեցութեան հրահանգներին հետևող
մի մարմին:

III

ՆԻԿԱԼԱՅ ԹԱԳԱՎՈՐԸ ՅԵՎ ՀԱՅ «ԱԶԳԱՍԵՐՆԵՐԸ»

Պիտի տսել, վոր ոռւս ցարն ել, նրա գեներալներն ել շատ լավ էյին հասկանում թե ինչ տեսակ պտուղ ե հայ բուրժուազիան:

Յարի Կովկասյան նամեստնիկը մեկ մեկ զանազան խոստումներ եր անում հայ բուրժուաներին և դրանց միջոցով նետում եր միամիտ հայ գյուղացիներին հարևան ժողովրդների դեմ:

Կորգել Թյուրքիայից Պոլիսը յեվ Անատոլիան, լայնացնել իր յեւկրի սահմանները յեվ ապա ոգտագործել նոր վայրերը հոգուս ոռւսական իմպերիալիզմի:

Դա ե եղել ցարական կառավարութեան բաղձանքը:

Հայտնի յե, վոր դեռ պատերազմի օրերին ոռւսական կառավարությունը հայտարարել ե, վոր մտադիր ե Ալաշկերտի հովիտը բնակեցնել կողակներով: Իր ժամանակ այդ մտադրությունների առթիւ ճիշ եր բարձրացրել Գրիգոր Չալխուշյանը, սակայն, վորքան հիշում ենք, նախիջկանցի պատրիոտի ադիոդորմ դիմումները մնում են անհետևանք: Խնդիրը պարզ եր:

Ռուսիան ցանկանում եր նոր վայրեր ձեռք բերել:

Բայց նա գիտեր և այն, վոր հեռավոր արևելյան ֆրոնտում հաջողությամբ գործելու համար հարկավոր են ոժանդակ տարրեր, յերկրին տեղյակ մարդիկ, բարեյացակամ բնակչություն, նպաստավոր վորոշ բազա — ու վերջապես հում թնդանութային միա:

Իսկ դրա համար շատ բան պետք էր:

Հարկավոր եր միայն ցուցամատի թեթև մի շար-
ժում և բարեշնորհ մի ժպիտ:

Ու այդպես ել լինում ե:

Յարի նամեստնիկը Վարանցով Դաշկովը հայե-
րին շոյելու համար մի քանի սիրալիբ խոսքեր և ասում
մի քանի հայ ջոջերին: Այդ նամեստնիկի կինը, իշխա-
նուհի Դաշկովան սիրալիբերեն թեյի յե հրավիրում
Մեսրոպ յեպիսկոպոսին, ինքը ցարը արյունարբու Նի-
կոլայը բարձրագույն ներումն և շնորհում դաշնակցա-
կաններին: Վերջապես մի քանի ուռա գրողներ մի
քանի անորոշ խոստումներ են անում ապագա Հա-
յաստանի մասին:

Յեվ ահա այդ բոլորն այնքան շմեցնում և հայ
ազգայնականներին, վոր դրանք միաբերան ու միա-
ձայն սկսում են դրվատել ուռա միապետության բո-
լոր քայլերը: Ինքը՝ ալեհեր կոթողիկոսն այնքան հի-
անում է, վոր առանձին կոնգակ և հրասբակում,
գիմում և խնդրագրով Նիկալային ու հրավիրում է
ժողովրդին անդամագրվել կամավորական խմբերին
եվ մասնակցել ռազմական գործողություններին:

Վարանցով Դաշկովի պալատում նույնիսկ պատ-
վավոր մի սենյակ է հատկացվում հայ ժողովրդի
ինքնակոչ յերեք «ներկայացուցիչներին»- Մեսրոպ
յեպիսկոպոսին, Սամսոն «Սեպալանի» Արուսյունովին»
յեվ Ալեքսանդր Խախտովին...

Այդ յերեք «ասպետները» վողջունում են հայ ժո-
ղովրդի անունից ցարին, ու պատասխան են քնդա-
նորային այն միսք, վոր հարկավոր եր ցարական
Ռուսիայի իմպերիալիստական գորբերին: Վոչ մի հաշ-
վետվություն չտալով հայ ժողովրդին ու աշխատավո-

բական խավերին, սրբադան այդ յերբորոգությունն ամենասերտ կապեր և պահպանում Դաշնակցության կենտրոնական կոմիտեյի հետ ու նրա հրահանգներով և ղեկավարվում իր ընթացիկ գործունեության մեջ:

Դաշնակցական մամուլը բացահայտ կերպով հայտարարում է, վոր իմպերիալիստական պատերազմը «ազատագրում է իր կռիվ և ու վոր ամեն մի հայի պատականությունն և աջակցել սկսված պատերազմին: Դաշնակցականներին միանում են և հայ մենչևիկները և հայ եսերները—ու ընդհանրապես «Դեղին Խոտեր» նացիոնալիստ բոլոր ներկայացուցիչները:

Քանի զարգանում են ռազմական գործողությունները, այնքան մեծանում են և հայկական մանր իմպերիալիստների ախորժակները:

Պետերբուրգի հայերի «Ազգային Բյուրոյի» պատասխանատու անդամներից մեկը, փաստաբան Ասիրեկովը ճիշտ այդ ժամանակ հայտարարում է, վոր հայերը չեն կարող բավականանալ Րիզեյի և Տրապիզոնի նավահանգիստներով ու անպատճառ պիտի ստանան—Ալեքսանդրոպոլս:

Դաշնակցական հրապարակագիր Նիկոլ Աղբալյանը դրանով էլ չի բավականանում ու գտնում է, վոր օրանց Սալմաստի ու Կապուտանի Հայաստանը փոքրիկ կը լինի...

Պատերազմից կովկասահայ բուրժուազիան, ինչպես ասացինք, մեծ սպասելիքներ ուներ: Մի կողմից նա հույս ուներ ստեղծել իր տնտեսական սփերան— իսկ մյուս կողմից նա հենց պատերազմի ընթացքում ուռնացնում եր շնորհիվ նրան, վոր մասնակցում եր ռազմաճյուղերի, հրացանների ու ուրիշ պարագա-

ների մասակարարման գործին: Գուկասովի ժառանգը հիշեցինք արդեն: Բայց այդպիսի Գուկասովներ մի քանի տասնյակ էին:

Դեռ չափավոր Յերիցյանը իր պատմական ուսումնասիրություններին մեկում շեշտել էր հայ վաճառականության բացասական դերը ուստանական պատերազմների որերին: Առհասարակ կովկասյան ճակատագրական կապիտալիստական կուլտուրան չափավոր պատերազմները նպաստել են մեծագույն չափով: Թերեւս դրա համար էլ պրակտիկ ու զգույց հայ վաճառականը ճանկասանի նկատմամբ վաբել է միշտ ավանցյուրիստական սի գործելակերպ: Այդ ավանտյուրիզմը նրան մեծ ոգուտ է տվել, իսկ անհաջողություն ու պարտություն ժամանակ նա միշտ ժամանակին փոխադրել է իր ընտանիքն ու կապիտալները դեպի ավելի տպահով վայրեր:

1914 թ. պատերազմը ուսահայ բուրժուազիայի կողմից դատվել է վորպես նպաստավոր մի կոմբինացիա:

Սակայն այդպես չէ նայել խնդրին տանկահայ ժողովուրդը—և նույնիսկ տանկահայ այն վաճառանաւթյունը, վորն աւրում էր վոչ թե գաղութներում, այլ բուն Տանկաստանում:

Թիֆլիսի «Ազգային բյուրոյի» ատենադրություններից մեզ հայտնի յի, վոր տանկահայությունն իր ժամանակ ուղարկել էր կովկասահատուկ պատվիրակություն և կատեգորիկ պահանջ էր դրել ուսահայերին՝ ինել նրբանկատ, վոչ մի պարագայում չմիջամտել թյուրքահայ գործերին, խուսափել կամավորական զնդերի կազմակերպումից և անտեղի վայրահաջությամբ

շվատթարացնել թյուրքահայերի առանց այն ել ծանր կացութիւնը:

Պատվիրակութեան անդամներից ելին ի միջի այլոց՝ ինչպես հայտնի յի, Բաջազնունին և Վռամյանը:

Սակայն այս անգամ ել, ինչպես միշտ, կովկասահայ բուրժուազիայի կազմակերպութիւնը՝ Դաշնակցութիւնը, և նրա քաղաքական որդանները՝ Ազգային բյուրոն և բյուրոները, անուշադիր են թողնում տաճկահայութեան հորդորները և միևնույն յեռանդով շարունակում են իրենց հին ուղին...

Յեւ ի տաճկահայ աշխատավորութիւնը տուժում է, կոտորվում և մահանում, ցրվում և անհետանում ռուսահայ բուրժուա «աղգասերի» ավանսյուրիզմի պատճառով:

IV

ՄԻՍՍԻՈՆԵՐ ՅԵՎ ԿՈՆՏԵՍԻՈՆՆԵՐ

Մեծ և յեղել նաև քրիստոնյա հոգևորականների շերը. դրանք վոչ թե ոգնել են հայ ժողովրդին, այլ ավելի ևս վատթարացրել են նրա դրութիւնը: Վատթարացրել են թեկուզ նրանով, վոր միշտ խանգարել են հայ—բուրժ աշխատավորական մասսաների համեմատութեան:

Փաստորեն այդ հոգևորականներն ամենուրեք ծառայել են տիրող դասակարգներին: Այնպես, ինչպես հայ կաթողիկոսը սպասավորել է կովկասահայ բուրժուազիային, ճիշտ այդպես և յեկեքոպական միսսիոնարներն արտահայտել են արեւմտյան Հապիտալիստական բուրժուազիայի ձգտումները:

Ամեն անգամ, յերբ վուե յեվրոպական պետություն ցանկացել և իր ձեռքը վերցնել այս կամ այն վայրը և թալանել այս կամ այն շրջանը, նա ամենից առաջ ուղարկել և դեպի այդ շրջանները քրիստոնյա հոգևորական միախոնարհներին, վորոնք մի ձեռքին աստվածաբաններ, իսկ մյուս ձեռքին՝ հրացանը, հեծախուզել են զվայր վայրը և հասնաւել են այդ սեղ ճախնական մի բազա:

Քրիստոնյա այդ միախոնարհները քրիստոնյացնելով վայրենիներին, ցանկացել են զրանով վորոհ հեռաւան սեղծել իմպերիալիս պետություններին՝ հաղթական արշավի համար:

Ահա հենց դրանով ել բացատրվում և այն, վոր յեվրոպական բուրժուական կառավարությունները, Տաճկաստանում իրենց գլխավոր ուշադրությունը դարձնում էյին ամենից առաջ հենց քրիստոնյա ժողովուրդների քրիստոնեացման վրա: Թվում և, թե ներանք հակառակը պիտի անեյին և փոխարեն քրիստոնյաների քրիստոնեացման, առաջին հերթին պիտի գործեյին տաճիկների, քրդերի մեջ: Սակայն կատարվում և հակառակը:

Քրիստոնյա միախոնարհների համար աստվածաշունչը և քրիստոնեությունը պարզապէս իդեոլոգիական մի զենք եր: Նրանց համար կարևորն այն եր, թե ինչպէս կարելի յե կենդանի հենարան ստեղծել Արեւելքում: Տաճիկներն և քյուրդերն արդեն իրենց որդեկտիվ կացությամբ չեյին կարող այդ դերը կատարել: Այն ինչ հայերը, հույներն և ասորիները հեշտ կերպով կարող էյին հասկանալ միախոնարհներին և

հենարանի դեր կատարել Արևելքում գործող կապիտալիստական միությունների համար:

Ահա ինչու բոլոր յեվրոպական պետությունների միասինարները հեխհե մտնում են հենց քրիստոնյա ժողովուրդների մեջ և այդ տեղ ել սկսում են իրենց յուրորինակ «կուլտուրական» պրոպագանդը: Յես չեմ կանգնում այստեղ հույն և ասորի ժողովուրդների շրջանում գործող միասինարների վրա: Կասեմ միայն վոր այն, ինչ վոր արվել և դրանց մոտ, ճիշտ միևնույնը կրկնվել և և հայկական վայրերում: Միասինարները պտտել են քաղաքից քաղաք և գյուղից գյուղ, «սառածել են սուրբ գիրքը», տեղ տեղ բաց են արե դպրոցներ և կոլլեջներ, տեղ տեղ տնտեսական ոգնություն են հասցրել հայերին և հովանավորել են «բիսոպոսեացած»-ներին...

Յեվ այդպիսով տասնյակ տարիների ընթացքում ստեղծել են յեվրոպական կապիտալիզմին և կապիտալիստական մշակույթին սպասավորող տեղական մի ինտելլիգենցիա: Մնված լինելով ֆրանսական և անգլիական միասինարների դպրոցներում տեղական այդ մտավորականությունն անհրաժեշտաբար քննել և ինքն իրեն, վորպես արշավող Արևմուտքի հավատարիմ սպասավորներից մեկը և ամեն կերպ ոգնել ու ոժանդակել և Տաճկաստանում գործող ոտարերկրյա կապիտալիստներին:

Դեռ Ռաֆէիլ իր «Կայծեր» ի մեջ նկարել եր այդ «Ֆրեռանգ» տեղացիների գարշելի ֆիզիոնոմիայի եական գծերը:

Ինքը, առհկահայ ժողովուրդը կարծես ընազդորեն զգում եր փարիսեցի «քրիստոնյաների» քաղա-

քականության վնասարեւր կողմերն և ամեն կերպ խուսափում եր դրանց հետ գործ ունենալ, *)

Տարիների ընթացքում կատարվող աշխատանքն անհետեւանք չի մնում:

Յեվրոպական միսիոնարների կազմակերպած տաճկահայ մտավորականությունն ոտար և թշնամի տարր ե դառնում Տաճկաստանի մեջը: Նա կամ «աւգլիա-սեր», կամ «Քրաւսասեր», կամ ել «գերմանասեր» եր: Նա անկեղծորեն և խոր համոզումով գործում եր հողուտ յեվրոպական պետությունների և վոչ մի քանք չեւր խնայում վորեւ ե կերպ վնասելու Տաճկաստանին և խափանելու նրա զարգացումը: Այդ ե խկական ձեւար-տությունը:

Ահա ինչո՞ւ և միսիոնարների դպրոցներն որեւէ-տիվորեն թուրքիայում կատարել են ամենաբացասա-կան և վնասակար դեր: Նրանք կսեւ են հայ ժողո-վրդին տանիկ ժողովրդից, նրանք սնել են կիսայեւ-րոպացի լակեյների յեվ կոմիվոյաժյորների հսկայա-կան մի խումբ յեվ ալգաթոով արգեն անգուլեդ են փորել հայ յեվ քուրք ժողովուրդների միջեւ:

Ինչ վերաբերվում ե կոտորածներին և տաճկա-կան բռնություններին, այդ բոլորը նույնպես ոգտա-գործվել ե ամենամեծ չափով միևնույն նպատակների համար:

*) Տեա՛ «Մեղու» Կ. Պոլիս. 1862 № № 176—221 (1863 թ.) «Նկարագիր միսիոներական յերեսնամյա քննարկի գործունեւության Ի Տաճկաստան յեվ տաւ-բախտության... հայ ժողովրդյան»: Այդ հողվածում քերված տեղեկությունները բավական բնորոշ են: «Ուր վոր գնացին, ասում ե հողվածագիրը, (միսիոնարները)

Ամենից շատ աղմուկ բարձրացրել են միսիոնարները և հենց դրանք ել յեղել են կոտորածներին և բռնություններին նպաստող առաջնակարգ ֆակտորները:

Շատ հեռուն չգնալու համար, հիշենք այն, վոր դեռ 22 թ. Չմյուռնիայի կոտորածի նախորդակին, ամերիկական քրիստոնեական մի շարք հաստատությունների ձեռներեցությամբ կազմակերպվել եր հայ—հունական տարրի ցույցը քեմալական կառավարության դեմ: Բոստոնում, Չիկագոյում, Ուստըր և ուրիշ շրջաններում մի շարք ամենահայտնի միսսիոնարներ հավաքել էյին իրենց յերկրից հեռացած միամիտ հայերին և հույներին և սկսել էյին լայնագույն հակաքեմալական քարոզ:

Իր ժամանակ ալդ ժողովների առթիվ ամերիկյան հայ մամուլի կողմից ևս սկսվել եր ուրույն հասարակական պրոպագանդ:

Ել չենք խոսում հայ—ֆրանսիական և հայ—անգլիական ընկերությունների գործունեության մասին:

Բնորոշն այն ե, վոր հենց այդ ժամանակ ամերիկյան խոշոր նավթային ընկերությունների ներկայացուցիչները գտնվում էյին Անգորայում և բանակցություններ էյին վարում քեմալական կառավարության հետ: Իսկ Պոլսում գործող ամերիկյան նավերի հրամանատար Բրիստոլն իր կողմից վաչ մի ջանք չեր

մեծամեծ աղմուկներ հանեցին, գրգռեցին և կռիվներու առիթ տվին, ու փառավոր փորձառություններ ընդունելի վերջը՝ քաղաքական գորության դիմեցին»...

(1863. «Մեղու» № 221, էջ 314)

խնայում ամերիկա-քեմալական համաձայնությունն աջողացնելու համար:

Ամեն ինչ պարզ եր:

Միսիոնարներն իրենց ազմուկով և «քրիստոնեական ցույցերով» ճգնում եյին վախեցնել թյուրքիային միմիայն նրա համար, վոր կարողանան լավագույն պայմաններով ներս մտցնել իրենց կապիտալը Տաճկաստան:

Միսսիոնարները և կոնցեսիոներներն իմպերիալիստական պետությունների անհրաժեշտ ագենտներն են: Յերկուսն ել գործում են միաժամանակ և միևնույն ծրագրով: Յեւ միսիոնարն աղմկում է «կոստանդնուպոլսի, մարգկայից իրավունքների բռնաբարության մասին» մինչև մի վորոշ մոմենտը: Յերբ նա տեսնում է, վոր իր «ֆրիսոնեական պրոպագանդը» ստեղծել է արդեն վորոշ եֆֆեկտ—կամաց-կամաց դադարեցնում է «բողոքը» և առաջ է քաշում խաղաղության կազմակերպիչներին» - կոնցեսիոներին և համապատասխան գործիչներին: «Խաղաղությունը» այդ պարագաներում հանդես է բերվում տնտեսական մեծնաշնորհների և նոր իրավունքների աջողեցման համար:

Այդ բոլորն այնքան պարզ է, վոր այսօր վոչ վոք չի ել ցանկանում ծածկել: Շատ պարզ է: Այնքան պարզ, վոր հաճախ միևնույն ռազմանավի մեջ Տաճկաստան են ուղևորվում միսիոնները և կոնցեսիոները, միևնույն ամտոմոբիլով պտտում են ֆրիսոնյա հոգեվորականն և իմպերիալիստական գորավարը և յերկուսն ել միմյանց կողքին նստած վորևէ արևելյան:

քաղաքում քարոզում են արևմտյան «Բաղաֆա-
կրքութիւն» բարեմասնությունների մասին:

Իրենք՝ տաճիկներն եւ այսօր լավ ճանաչում են
իմպերիալիզմի այդ յերկու մշտական ներկայացու-
ցիչներին և հմուտ կերպով կռիւում են արեւմ-
մտյան փարիսեցի բռնակալների խարդախությունների
դէմ:

Յեզ վորովհետեւ գիտեն, վոր յեվրոպացիներին
օգնող, ոժանդակող և աջակցող տարրերը թյուրքիա-
յում ապրող «Բիսուսնյա բնակչութիւնն է»-անհրա-
ժեշտաբար ամենաուժեղ հարվածները հասցնում են
իմպերիալիզմին սպասաւորող հայերին, ասորիներին և
հույներին: Այդպիսով հայկական կոստածների իս-
կական հեղինակները յեվրոպական իմպերիալիստե-
րն են յեզ գրանց հրահանգներով գործող Բիսուսնյա
միսիոներները: Դրանց «կուլթուրեցեցեական» առ-
իասանքը Տաճկաստանում ավելի չարիք է բերել, քան
բարիք: Դրանց գործունեւթյան և քաղաքականութ-
յան հետեանքն է Տաճկաստանի այնքան հարուստ
վայրերի ավերումը և բնակչության կոտորածը:

V

ՀԱՅ ՄԵՆՇԵՎԻԿՆԵՐԻ ԴԵՐԸ

Հայ մենշեւիկներն իմպերիալիստական մեծ պա-
տերազմի որերին պաշտպանել են միևնույն քաղաքա-
կան վարքագիծը, ինչ վոր և նրանց յեվրոպական ու
ռուսական ընկերակիցները:

Մեզ մոտ՝ կովկասում ու Հայաստանում դրանք
գործակցել են համերաշխօրեն հայ բուրժուազիայի
ռազմական կազմակերպության հետ: Առանձնապէս

ուշագրավ եր այդ կողմից Բազմում հրատարակվող սոցիալ-դեմոկրատական «Քանգվոր» թերթի շուրջը հավաքված խմբակցության դիրքը:

Մենշևիկյան այդ կազմակերպությունը 1917-1918 թ. կանգնած եր Պլեխանովի տեսակետի վրա ու հետևողական կերպով պաշտպանում եր «պատերազմ միջեւ վերջին հաղթանակը» սկզբունքը: Զբաղականանալով դրանով, նա ամենամեծ յեռանդով ոժանդակում եր «Հայ Ս.զգային» այն «Խորհրդին», վորը փաստորեն իրենից ներկայացնում եր դաշնակցական կուսակցության հասարակական կազմակերպություններից մեկը:

Բազմա խորհրդի տապալումից հետո, հայ մենշևիկները գլխավոր պատգամախոս՝ Բախչի Իշխանյանը նույնիսկ այնքան հեռուն ե գնում, վոր սկսում ե ակնհայտնի հակահեղափոխական պայքար մեծամասնականների դեմ:

Իսկ Իշխանյանի ամենայեռանդուն մի ընկերակիցը՝ Դ. Անանուն իր վրա յեր վերցրել, վորքան ել այդ տարրերնակ չե, դաշնակցական քաղաքականության quasi, — մարքսիստական հիմնավորման գործը:

Փոխարեն զգաստացնելու նացիոնալիզմով կուրացածներին, փոխանակ խափանելու խմբապետական ցնորքներով վառված շինականների շարժումը, հայ մենշևիկի մի յերկու ականավոր այդ պարագլուխներն ամեն կերպ դրվատում եյին ազգայնականների բոլոր քայլերն ու դրանով արդեն խանգարում եյին աշխատավորական տարրերի քաղաքական արթնացման գործին:

Միակ խիզախ գործիչը՝ Արշակ Զոհրաբյանն եր

(ու նրա շուրջը խմբված մի քանի ընկերները), վերը չը նայած իր թեքումներին քաջություն ե ունեցել արձանագրել մենչևիկ ընկերակիցների դավաճանությունը ճիշտ այդ որերին,—և ձայն ե բարձրացրել նացիոնալիզմի դեմ:

Յեվ սակայն, չնայած դրան, գտնվում են Հայաստանի մայրաքաղաքում մարդիկ, վորոնք անվանարկում են Զոհրաբյանին ճիշտ այդ գործի համար, գտնվում են սոցիալ դեմոկրատներ, վորոնք միացնում են իրենց ճիշդ դաշնակցական ճահճի կրկնոցին:

Անունները մենք չենք բերում: Փոքր ե մեր յերկիրը և բոլորին ել հայտնի յեն անցյալի այդ պինգվիները:

Սակայն՝ իմպերիալիստական պատերազմի տասնամյա հորելյանին պետք ե հիշվեն և զըրանք, վորովհե՛սեվ իրենց վախկոտ գործելակերպով, սոցիալ՝ հայրենասիրական իմաստակությամբ յեվ շարված ցացիոցակիզմով հայ մեճեճիզմի այդ հասվածները վճասել են հայ բանվորների ու գյուղացիների հեղափոխական արքայացման գործին ու գրանով արգենավելորդ ուժ ու յեռանգ են ներճել իմպերիալիստական պատերազմը վարողներին յեվ հրահրողներին:

VI

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

Ինքը՝ Հայաստանը վորպես հայկական վայր, պիտի ասել, յերբեք արժեք չի ներկայացրել իմպերիալիզմի համար: Յեվրոպացիների համար ամենակարևորը Տաճկաստանն եր, իսկ ամենահիմնական նպա-

տակակետը՝ Միջագետքի նավթը՝ Բաղդադի յերկաթուղին, Պոլիսը և Ալեքսանդրետը։ Պատերազմից առաջ իմպերիալիստները շատ անգամ խոսել և վիճել են այդ խնդիրների մասին։ Պատերազմի որերին ելամահալուով վեճն իմպերիալիստական խորհրդաժողովներում ընթացել և միևնույն պրոբլեմների արժարժման և քննության շուրջը։

Իսկ բոլոր մյուս հարցերը, մասնավորապես «Քրիստոնյաների և «ազգային փոքրամասնությունների» պաշտպանության խնդիրը մեջտեղ են բերվել, վորպես ռազմական ուրույն քաղաքականության վորոշ զենքեր։

Ազմուկը, բողոքը և դիվանագիտական շարժումն արևելյան և հայկական հարցի շուրջը հնարավորություն են տվել իմպերիալիստներին ճգմել տաճիկներին և խլել նրանցից տնտեսական վորոշ մենաշնորհներ։

Պատերազմի որերին զաղրելի այդ քաղաքականությունը դրսևորվել և ավելի բնորոշ ու ցայտուն կերպով։

Իմպերիալիստական պետություններն ոգտագործելով իրենց յերկրում ապրող հայ վաճառականներին և դրանց մտավորականներին մի քանի աննշան խոսք են նետել «ապագա Հայաստանի» մասին, մի քանի «բարի խոստումներ» են արել հայ պատվիրակներին...

Պատերազմի համար անհրաժեշտ եր «թեղանոթային միս»։ Իսկ ռմ կաբող եր ավելի լավ կատարել այդ դերը, յեթե վոչ մշցի ռանչպարը կամ ասորի գյուղացին։

Դրանք «ռայաներ» եյին, քրիստոնյաներ, միսիոնարների հացը կերած մարդիկ, վորոնց համար յեվ-

րոպացին— «մաքուրյան» և «ազատուրյան» նշանա-
բանն էր:

Դրանք իրենց հայտնի գրողների և «ազգային
հեղափոխականներին» պրոպագանդի միջոցով պատ-
րաստ էյին ամեն ընդհանուր կռիվի յիշնել Թյուրքիայի դեմ
և աջակցել Արևելքի դեմ պայքարող իմպերիալիզմին:

Ի՞նչ խոսք, վոր անգլիական և ֆրանսիական
իմպերիալիզմի համար ավելի գերադասելի յեր ոգտա-
գործել պատրաստի այդ ուժը, քան թե ավելորդ
ժախքեր անել, և անգլիական կամ ֆրանսիական ա-
րյուն թափել Միջագետքի անապատներում:

«Սեվրի պայմանագիրն» այդ նույն իմպերիա-
լիզմի զենքերից մեկն էր: Այսպես թե այնպես, այդ
պայմանագիրը վոզեվորում է հայերին և հույ-
ներին, լարում է դրանց թուրքերի դեմ և հնարավո-
րություն է տալիս իմպերիալիստական պետություն-
ներին տնտեսել իրենց ուժերը:

Ո՞վ գիտե, յեթե «Սեվրը» չլիներ, թերևս հույն
ժողովուրդն ել չեր կռվի, Հայաստանն ել ավելի շուտ
կսթափվեր ազգայնական իր յերազներից:

«Սեվրի» տխրահռչակ պայմանագրի դերը կայա-
նում է նրանում, վոր նա կազմակերպել և հավաքել
է ցրված ազգայնականներին Անտանտի շուրջը:

Գուցե հենց դրա համար ել դաշնակցական կա-
ռավարության դիվանում արյունոտ գույն ունի Սեվ-
րի պայմանագրի կազմը:

Դաշնակ տիրացունների համար այդ դակումեն-
տըն աշխատել ել ազգային հաղթանակի «սիմվոլ» է:

Հայ աշխատավորների համար—միլիոն աշխա-
տավորների մահը հիշեցնող արյունոտ կոթող:

*
* *

Դաշնակցական կառավարութիւնը, հուլյն կառավարութիւնը, ասորի կառավարիչներն այդպիսով Արեւիկէի դեմ կռիւղ իմպերիալիստական հանուր զորաբանակի առանձին հատվածներն էյին:

Հայաստանը հարկավոր և պետքական եր վորպես ԿՌՎՈՂ մի գունդ: Յեւ միայն այդքան:

Միսիոներները, հայասիրական ընկերութիւնները (հայ-բրիտանական և հայ-ֆրանսիական), հեղափոխական-ազգային կուսակցութիւնները, անհրաժեշտ էյին «ազգային վոզեվուքլուցն» անշեջ պահելու համար: Իսկ թե ինչ հետեանք կարող եր ստեղծվել դրանից թուրքիայում ապրող փոքրամասնութիւնների համար, այդ բոլորը շատ քիչ եր հետաքրքրում արեւմտյան դիվանագետներին:

Յիվրոպացիներին այդ չեր զբաղեցնում, վորովհետեւ նրանց անմիջական նպատակն եր հայերի, հուլյների և ասորիների ԱՐՅԱՆ ԳՆՈՎ գլխի թուրքիայից նոր հողավայրեր, կամ նոր մենաշնորհներ:

Հայ վաճառականներին, հայ բուրժուաներին այդ չեր հետաքրքրում, վորովհետեւ դրանք ել ապրում էյին յերկրից դուրս, գաղութներում, Փարիզում կամ Լոնտոնում, Դահլիքում կամ Բոստոնում և վոչ մի հարված կամ ֆլաս չէյին կրում թուրքիայից: Ամենաքիչ բացառութիւններով բուրժուա հայերը կապված էյին յեվրոպական արդյունաբերական ընկերութիւնների հետ յեւ վորոհ հասույթ էյին ստանում իրենց տեղերի «վասակած» հավելյալ արժեքից: Յեւ դրա համար ել պատրաստ էյին ամեն ոգնութիւն հասցնել իրենց տեղերին, թեկուզ այդ լինի

մշեցի կամ շատախցի շինականների կոտորածի գնով։
Հայաստանի գաղանկցական կառավարությունը
հենց այդ, գաղսւթահայ (ռուսահայ) բուրժուազի-
այի կառավարությունն էր։ Յերկրի բնակչության
հետ, բանվոր և գյուղացի ժողովրդի հետ, իրական
հողի հետ նա ամենևին կապված չէր։

Դրա համար ել նա սկզբից մինչև վերջ, կատաղի
տոկունությամբ կատարում է իմպերիալիստների բո-
լոր պահանջները, կոտորածի յե մատնում Տաճկահա-
յաստանը և Շիրակը, ու ավերում և քանդում է գյու-
ղական Հայաստանի արգավանդ և հարուստ շրջանները։

7. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՅԵՎ ԽՈՐ- ՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Դաշնակցական մամուլն այժմ ել խուսափում է
ճիշտ տեղեկություններ հաղորդել իր յեվ խորհրդային
կառավարության հաբաբերությունների մասին 1920
թվին։ Յեվ հասկանալի յե ինչու։ Վոչ մի փաստ այն-
քան լավ չի բնորոշում դաշնակցական կառավարու-
թյան իսկական եությունը, ինչպես նրա դիրքը խոր-
հրդային կառավարության հանդեպ։

Ինչպես հայտնի յե 1921 թվին Հայաստանը
գտնվում էր ամենածանր նյութական կացության մեջ։
Այդ ժամանակ նա կատարելապես վոչինչ չէր ար-
տադրում, այլ միայն սպառում էր։ Սպառում էր ան-
ցյալից մնացած չնչին պահեստները, սպառում էր ժո-
ղովրդից բռնի ուժով հավաքած պարենը, սպառում
էր արտասահմանից ստացված նվերները։ Յեվ այդ-
պես ել անդադար սպառելով «կառավարվում» էր մի
կերպ։

Իսկ յերկիրը ճիշտ այդ ժամանակ քայքայվում էր և հյուժվում: Քանդվում էր վերջնականապես գյուղական տնտեսությունը, ավերվում են խնամքի բացակայության շնորհիվ այգիներն և արտերը: Սովորաբան հնձում եր մահվան գերանգիով բազմում յեվ գյուղերում քափառող անհուն հազարավոր գաղթականներին, վորբերին յեվ մանուկներին... Ահա ճիշտ այդ ժամանակ հայտնի է դառնում, վոր Մոսկվայի մեծամասնական կառավարությունը չնայած իր սեփական ծանր կացության պատրաստ է իր ձեռքը մեկնել Հայաստանի աշխատավորությանը և ոգնել նրան, յեթե միայն այդ մասին վորոշ դիմում արվի Հայաստանի կառավարության և ողմից, յեթե միայն Հայաստանում իշխող կառավարությունը հրաժարվի իր իմպերիալիստական և հակահեղափոխական գործելակերպից:

Խորհրդային կառավարության և՛ առաջարկը, և՛ պայմանները հայտնի էյին վոչ միայն նեղ շրջաններին, այլ նաև ավելի լայն հասարակությանը:

Խորհրդային Հանրապետությունը մի պահանջ էր դնում միայն դաճակցականներին՝ վառ դնել զենքերը յեվ կտել իր հարաբերությունները իմպերիալիստական պետությունների հետ: Միաժամանակ նա առաջարկում էր դաշնակցական կառավարությանը իր վրա վերցնել միջնորդի դերը և խաղաղ կերպով լուծել հայ-առնական վեճը:

Հարցը չափազանց պարզ էր: 1920 թվին Խորհրդային Հանրապետությունը այնքան ուժեղ էր, վոր կարող էր դառաիկ ձեռքերով գրավել վոզ Ֆեդերալիզացիա: Պետք է հիշատակել, վոր նա դեն էր նետել հա-

բավի բոլոր հակահեղափոխականներին, ջարդել և խեղդել Դոնի և Կուրանի շրջանում գործող բոլոր միապետականներին և իր ձեռքն եր առել Հյուսիսային Կովկասն, Դադստանը և Ադրբեջանը: Դրությունը այնքան վորոշ եր, վոր հուլյնիսկ վրացական մենշևիկներն վորոշում եյին հանել առանձին պատվիրակություն ուղարկել Մոսկվա և հաշտություն կնքել մեծամասնականների հետ:

Թվում ե, թե մենշևիկների այդ գործելակերպը պիտի սթափեցուցիչ ազդեցություն թողներ հայ դաշնակցականների վրա: Սակայն իրապես կատարվում ե հակառակը:

Դաշնակցականները ուղարկում են իրենց պատվիրակներին Մոսկվա, բայց միաժամանակ նրանք առնում են ամեն ինչ այդ պատվիրակների միասիան սովրեկու յե հնարավոր հաշտությունը խանգարելու նպատակով:

Նախ և առաջ դաշնակցական Հայաստանը պատվիրակության անդամներ ե ընտրում նրանց, վորոնք հայտնի եյին յերկրում իրենց հակախորհրդային որչենտացիայով: «Հատարար» պատվիրակության նախագահ եր ընտրվել «Հիմ Ասսվածներ»-ի և «Տերազ Որեր»-ի հեղինակ Լեվոն Շանթը, վորը միշտ ել յեղել ե կապիտալիստական Անտանտոյի ամենաջերմ յերկրպագու: Պատվիրակության յերկրորդ անդամներ՝ Համարձում Տերտերյան, Խսերական և հակապետական հովերով համակված մի մտավորական, և ապա յերբողը՝ Զառաֆյան, վորը անցյալում 1918 թվին խիստ կատաղի ընդհարումներ եր ունեցել Բազմամեծամասնականների հետ: Այդ բոլորից պարզ եր ար-

դին, վոր դաշնակցական կառավարութիւնը դիտավորութեամբ ընտրել և այնպիսիներին, վոր վորևէ համաձայնութեան համար վոչ մի յեղը չլինի պատմիրակաների և Մոսկւայի մեջ:

Սակայն դա ել բաւական չհամարելով Հայաստանի կառավարութիւնը լիազօրել եր իր պատմիրականերին չշտապել և շարժվել Հափաղանց դանդաղ կերպով դեպի Մոսկւայ:

Խնդիրը նրանումն էր վոր ճիշտ այդ ժամանակ սկսվել էին դադանի բանակցութիւններ տաճիկներէ և անգլիացիներէ միջև Լոնդոնում: Դաշնակցականները լսել էին մի բան այդ մասին, և մեծ հույսեր էին տածում վոր կարող կլինեն անգլիացիներից ստանալ ավելի բան, քան Խորհրդային Հանրապետութիւնից: Դրա համար ել պատմիրակութիւնը դանդաղ եր շարժվում, վորպեսզի հնարավորութիւն տա իր կառավարութեանը տեղեկութիւններ ստանալ Լոնդոնից և ըստ այնմ ել վարել իր գործելակերպը Խորհրդային Իշխանութեան հանդեպ:

Ինչ և իցե:

Դաշնակցական պատմիրակութիւնը այդպես դանդաղ շարժվելով հասնում և վերջապես Վլադիկավկաս: Այդտեղ նա իջնում է իր տեղական կոնսուլի մօտ և ութ որի չափ «հանգստանում» եւ Ապա միևնույն արագութեամբ շարժվում է դեպի Նոր Նախիջևան և այդ քաղաքում նորից «իջնում» է և նորից «հանգստանում»: Յոթ որից հետո «հաշտարար պատմիրակութիւնը» դանդաղորեն «բարձրանում» է տեղից և վերջապես ուղեւորվում է դեպի Մոսկւայ: Բայց դրանով էս չի վերջանում գործը:

Մոսկվայում դաշնակցական կառավարութեան պատվիրակութիւնը սկզբից արդեն ներկայացնում և զաշնակցութեան տրագիկոն պահանջները: Ամենեին հաշվի չառնելով իր սեփական փափուկ վիճակը և քաղաքական հանգամանքները պատվիրակութիւնը մի կողմից կտրուկ կերպով պահանջում և իրեն տալ խաւոյն և յեթ Ղարաբաղը, իսկ մյուս կողմից եւ վռն մի կերպով չի համաձայնվում կտրել իր կապերը իմպերիալիստական Սնտանտի հետ: Այնինչ Յորհրդային կառավարութեան համար ամենակարեւորը հենց այդ վերջին կետն էր: Նույնքան կարեւոր կետ էր դա և զաշնակցական կառավարութեան համար, վորը ինչպես շեշտեցինք վերը—կապված էր ամենասերտ կերպով իմպերիալիստական պետութիւնների հետ և դրանց ներկայացուցիչների խորհուրդներով եւ ղեկավարվում եւ վողջ գործունեւութիւնն ընթացքում:

Դրտ համար եւ Մոսկվայի «բանակցութիւնները» վերջանում են անհաջողութեամբ:

Այնուամենայնիւ Յորհրդային կառավարութիւնը կարեւոր և անհրաժեշտ համարելով հաշտութիւնը Հայաստանի հետ ձեռնարկում և մի ուրիշ միջոց նա ուղարկում և իր կողմից առանձին պատվիրակութիւն և ներկայացուցիչ և կարգում Հայաստանի համար Լեզրանին:

Սակայն այդ ձեռնարկութիւնն եւս չի սթափեցնում զաշնակցականներին: Հայաստանի կառավարութիւնը առանձին դժկամակութեամբ և վերաբերվում Յորհրդային Հանրապետութեան պատգամավորութեան: Դաշնակցական կառավարութեան արտաքին գործերի նախարարութեան դիվանում պահված դոկու-

մենաներից հայտնի և վոր այդ ժամանակ դաշնակցական Տիգրան Բեկդադյանը բանակցություններ ևր վարում անգլիական զինեւրալ Ստոկսի հետ և իր բոլոր քայլերի մեջ զեկավարվում ևր Ստոկսի ցուցումներով: Կասկածից զուրս և այն վոր դաշնակցական կառավարության կողմից ձեռնարկած արշավանքը Ութումրա նույզիս կատարվել և անգլիացիների անմիջական խորհուրդով: Յեւ անա, ևրբ պարզվում և այդ խելակորույս արշավանքի անհաջողությունը, յերբ թուլանում և քայքայվում և ֆրոնտը—այդ ժամանակ և միայն պարզվում դաշնակցականների համար, վոր անգլիացիների կողմից վոչ մի ոգնություն չի գա:

Միևնույն զիվանում պահված, թղթերից տեղեկանում ենք, վոր նույնիսկ այդ ժամանակ Բեկդադյանը զիմել ևր Ստոկսին և ստացել ևր զբանից խորհուրդ իր «սեփական միջոցներով» զուրս գալ ստեղծված անեկանելի կացությունից:

Խորհրդային ներկայացուցչությունը այդպիսով Հայաստան ևր մտնում ճիշտ այն ժամանակ, յերբ Հայաստանից յերես ելին դարձնում նրա Յևրոպայի «բարեկամները»:

Ուշ ևր այդ «սթափումը»: Սակայն այդ «ուշացած» մոմենտին ևս հնարավոր կլինեւր ուղղել հին սխալները, յեթե միայն դաշնակցականները զեթ այս անգամ կտրեյին իրենց կապերը իմպերիալիզմի հետ և կատեգորիկ կերպով հայտարարեյին, վոր պատրաստ են հաշտվել Խորհրդային Հանրապետության հետ և վերջ տալ անգլիական իմպերյալիստների կողմից հրահանգված ափոնտյութիստական գործելակերպին:

Այդ հաշտութեան կոնկրետ իրականացման համար Խորհրդային Հանրապետութիւնը Ալեքսանդրապոլ եր ուղարկել իր կողմից Բուդու Մդիվանիյին, վորին հանձնարարւած եր իր վրա վերցնել միջնորդի դերը հայ տաճկական բանակցութիւնների ժամանակ։ Սակայն Դաշնակցական կառավարութիւնը հրաժարւում ե այդ առաջարկից ևս ու նախարար Արարատյանի բերանով հայտարարում ե քեմալականներին, վոր Դաշնակցական կառավարութիւնը ցանկանում ե բանակցութիւնները վարել միանգամայն անկախ և առանց վորեւ միջնորդի։

Դա ևս ճիշտ չեր իհարկէ։ Դաշնակցական կառավարութիւնը հրաժարւում եր Խորհրդային կառավարութեան առաջարկից։ Բայց նա ճիշտ այդ ժամանակ չեր հրաժարւում մի ուրիշ միջնորդի խորհուրդներից։ Այդ խորհրդատուն անգլիական զինեւալ Ստոկսն եր։

Այլիւ քան ակներե և այն, վոր այս անգամ ել հրաժարւելով Մդիվանու միջնորդութիւնից դաշնակցականները ղեկավարվում եյին իմպերիալիստական պետւթյունների ցեղայացուցիչների խորհուրդներով ու հեռահանգներով։ Դաշնակցական կառավարութիւնը չեր հրաժարւել տակավին վաղեմի «ազգային» քաղաքականութիւնից և խորապես հավատացած եր, վոր իր խելահեղ քաղաքականութեան համար կվարձատրվի իմպերիալիզմի կողմից։

Սակայն այս անգամ ել նրա այդ հույսերը ջախջախվում յեն չարաչար կերպով։

Վոչ վոք չի գալիս ոգնութեան։

Վոչ վոք ձեռք չի մեկնում Հայաստանին։ Դաշ-

նակցական կառավարութիւնը հրաժարվելով Խորհրդային կառավարութեան միջնորդութիւնից ինքն իրեն մեկուսացման և յենթարկում և մնալով կատարելապէս միայնակ Թուրքիայի հանդեպ, իր սեփական ցանկութեամբ ու իր սեփական վարժողութեամբ ընդունում ու ստորագրում է Ալեքսանդրապոլի պայմանագիրը:

Նա հնարավորութիւն ունեւորագրել այդ պայանագիրը, քանի վոր Դաշնակցական կառավարութիւնը իրավազոր կառավարութիւն չէր այլևս, քանի վոր այդ ժամանակ Հայաստանում ստեղծվել էր նոր — Խորհրդային կառավարութիւնը:

Այդ դիտեր և Ալեքսանդրապոլում բաղմած դաշնակցական տապալված կառավարութեան պատվիրակութիւնը:

Յեւ վ յիթէ նա չնայած դրան ստորագրում էր Ալեքսանդապոլի պայմանագիրը անշուշտ նա անում էր այդ — դեկավարվելով այն հույսով վոր կարող կլինի Թուրքիայի ոգնութեամբ նորից դրավել քաղաքական իշխանութիւնը և նորից դառնալ ավերված Հայաստանի տերն ու տիրականը:

Այն, վոր Դաշնակցական կառավարութեան մտադրութիւնը իրապէս այդպէս էր — յերևում է նրանից, վոր շատ շուտ Հայաստանի Խորհրդայնացումից հետո «ձախ» դաշնակցական Վրացյանը լինում է առաջինը, վոր ապստամբութեան դրոշ է քարձրացնում Խորհրդային կառավարութեան դեմ ու դիմում է առանձին պաշտոնական դրութեամբ քեմալական կառավարութեան ներկայացուցիչ՝ Բեհանդինին ու խնդրում է դրանից

հասցնել իրեն ռազմամթերք մեծամասնականներին՝ Հայաստանից դեն վտարելու համար:

Այլ խոսքով, արդեն Ալեքսանդրապոլում դաշնակցական կառավարությունը վորոշել եր հասցնել Բալեփիկների հետ միայն ձեռքի համար յիվ ժամանակ շահելու նպատակով: Յեւ դեռ այդտեղ նա ծրագրել եր վար չդնել իր ժանգոտած զենքերը և առաջիկա հարմար պարագային հենց դիմել իր հինավուրց «բարեկամներին» — իմպերիալիստներին և նորից շարունակել «հին երգը»:

Դրանով ել բացատրվում և այն, վոր կովկասահայ բուրժուազիայի կառավարությունը կռիվը Խորհրդային կառավարության դեմ չի դադրեցնում մինչև իր վերջնական պարտությունը:

Ընշվում և Վրացիների խելառ ապստամբությունը, սակայն դրանով ես չի վերջանում ամեն ինչ, վորովհետև միջազգային իմպերիալիզմին ծառայող հայ հակահեղափոխությունը բարձրանում և դեպի լեռներն և այգտեղից, լեռնային Ջանգեղուրից շարունակում և համառությամբ իր կռիվը ժողովրդի դեմ:

Ոգը մաքրվում և վերջնականապես և Հայաստանը ազատ շունչ և քաշում այն ժամանակ միայն յերբ լեռներից քշվում են կովկասյան հակահեղափոխության այդ վերջին խմբերը:

Հայաստանի աշխատավորությունը վճռական իր հարվածով դեն և նետում դեպի Պարսկաստան դաշնակցական կառավարության վերջին գունդերը և դրանով արդեն ազատագրում և յերկիրը վերջնականապես իմպերիալիզմի տիրակալությունից:



Ինչպես տեսնում ենք, աղքատ և ավերված Հայաստանը կրել է մեծագույն հարվածներ իմպերիալիստական սլատերազմից: Տրորվել է նա զորքերի վտարների տակ, տրորվել է առաջ և հետ գնացող բանակների վտարների տակ... Ջարդվել և կոտորվածի և մատնվել նա հանուն իմպերիալիզմի — և յեղբրոսական «քաղաքակրթության»:

Կոխվ է մղել նա իր հարևանների դեմ՝ ծառայելով և սպառավորելով միևնույն «Յիվրոպային»:

Ահա ինչու ավերված և քանդված Հայաստանը այսօր, յերբ «խաղաղասեր Յիվրոպան» և «աղգութունների լիզան» արյունոտ անցյալի հաշվեհարդարն է կատարում, իրավունք ունի իր կողմից ևս ներկայացնելու առանձին հաշիվ միջազգային մեծ և վոքր այն ալիազակներին, վորոնք ստեղծել են այս մեծ և ահարկու սլատերազմը:

ՀԱՎԵԼՎԱԾ

1. ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶՍՏԱԳՐՈՒՄԸ

(Յարական կառավարութեան արտաքին գործերի նախարարութեան զաղանի զիվանից):

«Տեղեկագրութեան Փոքր Ասիայի հարցի առթիվ:

1917 թ. 21 փետրվարի

1916 թ. զարեան Լսնդոնում յեւ Պետրոգրադում տեղի ունեցած բանակցութեանցի հետեւանում—անգլիական, Թրանսիական յեւ ռուսական զաւանկից կառավարութեանցի համաձայնութեան եւան Ս.սիական Թուրքիայում իրենց ապագա ազգեցութեան շրջանցի յեւ տեղիստիալ նվաճումնցի մասին, ինչպես և Արարիայի սահմաններում արարական անկախ պետութեան կամ արարական պետութեանցի կոնֆերենցիա կազմելու վերաբերյալ:

Այդ համաձայնութեան ընդհանուր գծերով հետեւյալն է.

Ռուսիան ձեռք է բերում՝ Երզնումի, Տրապիզոնի, Վանի յեւ Բիթլիսի շրջանցի, ինչպես և Հարավային Բրդստանի տեղիստիան՝ Մուշ-Սղերդ, Իրն-Ոմար, Ամալիա-պարսկական սահմանի գծով: Սեւ ծովի ափին ռուսական նվաճումնցի վերջնական կետն ապագայում վորոշելիք վայրն է լինելու Տրապիզոնից Արեւմուտը:

Թրանսիան սեանում է Սիրիայի ծովափնյա շերտը, Ադանայի վիլայեթը և հարավից Այնթապ—Մարդին գծից մինչև ապագա ռուսական սահմանը և հյու-

սխից Ալա-Դուզի ու Կեսարիայի, Ազ-Դուզի, Իլ-Դիզ
Դուզի, Ջառի Ոգինի Խարբերդի գծի սահմաններում
ընկած տերրիտորիան:

Մեծ Բրիտանիան ձեռք է բերում Միջագետքի
հարավային մասը Բաղդատով հանդերձ և հյուսիսում
իրեն վերապահում և Ղայֆա ու Ադհա նավահան-
գիստները:

Անգլիայի ու Ֆրանսիայի համաձայնությամբ
Ֆրանսիական և անգլիական յերկրամասերի միջև ըն-
կած տարածությունից կազմվում և արարական
պետությունների զաշնակցություն վորի վրա ունե-
նալիք աղղեցության շրջանները միաժամանակ վո-
րոշվում են:

Ալեքսանդրիտտան ազատ նավահանգիստ և հայ-
տարարվում:

Դաշնակից պետությունների կրոնական շահերն
ապահովելու նկատումներով՝ Պաղեստինը սրբավայրե-
րով հանդերձ դուրս է հանվում թրքական տերրի-
տորիայից և Ռուսիայի, Ֆրանսիայի ու Անգլիայի
համաձայնությամբ հատուկ բեժիմի է յենթարկվելու:
Իբրև ընդհանուր կանոն սահմանող պետությունները
պարտավորվում են փոխադարձաբար ճանաչել միմեկ
պատերազմյեղած կոնցեսսիաներն ու արգյունաբե-
րություններն իրենց ձեռք բերած օրջաններում: Նրանք
համաձայնվում են իրենց նվաճումներին համապա-
տասխան բաժին հանձն առնել տանկական պարտքից:

Համապատասխանում և բնազդին:

(Ստորագրություն)

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ԲՐԻԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԳԵ- ՎՈՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ

Նախարարությունն ներքին գործերի: Նորին սրբության Տ. Գեվորգ Ե. ժայրագունն պատրիարք և կաթողիկոսի Ամենայն հայոց, ի սուրբ Եջմիածին. ի Վաղարշապատ:

Ձերդ Սրբություն!

1915 թ. հոկտեմբեր 1/28 նամակով ինձ իրազեկ անելով, վոր Ձերդ Սրբությունը հաճել և Պողոս Նուպար Փաշային պատվիրագիր տալով իրեն ներկայացուցիչ նշանակել Հասարակապետության կառավարության առաջ՝ հայ ժողովրդի շահերի պաշտպանության համար, Ձերդ Սրբության հաճելի յե յեղել արտահայտել ինձ և այն իղձերն ու զգացումները. վոր նա ունի դաշնակից պետությունների գործերի հաղթանակի նկատմամբ:

Հասարակապետության կառավարությունը շնորհապարտության զգացումով ընդունեց այդ բարձր համակրության վկայությունը, վորի արտահայտություններ, մանավանդ այն վայրկյանին, յերբ Սուրբ Եջմիածնի Առաքելական Աթոռը կրում և այնպիսի դաժան փորձություններ, — առավել ևս զնահատելի և դարձնում այդ այն յերկրների համար, վոր մաքառում են այս բոլորիս հանուր ուժերով հանուն իրավունքի, արդարության և մարդկության պատվի:

Ձերդ սրբության քաջ ծանոթ են այն վշտագին հուզումները, վորով Ֆրանսիան և հաղորդակից յեղադ մյուս քաղաքակիրթ ազգերի հետ այն սրտմը-

տության, ի դեմս այն հալածանքների լուրերի, վորի զոհերն յեղան կրկին Տաճկաստանի հայերը:

Ամեն ահգամ, յերբ ֆրանսիան հնար ե ունեցած, ի նկատի ունենալով ներկայիս ալայմանները, հզորապես արտահայտելու հայ ազգին յուր խնամքը, հասարակապետության կառավարությունը հոգածու ե յեղած նոցա զորավիգ լինել և մեղմել նոցա տարաբաղդ վիճակի խտությունը: Ձերդ սրբությունը կարող ե վստահ լինել և հավատացած, վոր դաշնակից պետությունների համահաճությամբ, այս միևնույն զգացումներով կը ձեռնարկե նա հայ ժողովրդին ընձեռելու որինական հատուցումներ, յերբ հանգամանքներն այդ ներելու լինին:

Հաճեցեք ընդունել ջերմ հարգանացս հալատիքը, վորով պատիվ ունի կալ,

Տեր,

Ձերդ սրբության

Ամենախոնարհ և ամենահնազանդ ծառա

Ս. Բրիյան

Փարիզ. 12 մարտ 1916 թ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՏԱՐ ՆԻԿՈԼԱՆ.

Արտատպում ենք Դաշնակցության կենտրոնական որդան «Հորիզոնից» (1917 նոյեմբեր 27 № 265) այն առաջնորդողը, վորով մեր ազգային «հեղափոխականներն» վողջունում էին արյունոտ նիկոլային: Թիֆլիս 27 նոյեմբերի.

Պատմական որեր.

Թիֆլիսն այս քանի որն պատմական որեր ե ապրում:

Ռուսիոյ Թագաւոր Կայսրը, իր Թագադրությունից հետո առաջին այցն է, վոր տալիս է Թիֆլիզին: Իսկ Թիֆլիսը կովկասի սիրտն է, նրա մայրաքաղաքը, ուր ներկայումս շատ Թե քիչ թվով համախմբւած կը գտնենք Ռուսաստանի քաղաքացիականաց ժողովրդային ներկայացուցիչներին: Այստեղ կը գտնենք և՛ Վելիկոռուս, և՛ Մալոռուս, և՛ Լեն, և հրեյա, Թուրք, Վրացի, Հայ... մի խոսքով Թիֆլիսը այսոր կարող էք համարել Մեծ Ռուսաստանի մինչատուրը:

Այնպես վոր, այն սրտագին ընդունելությունը, վոր ներկայումս ցույց է տալիս Թիֆլիսը Ռուսաստանի Ոգոստափառ Պետին, կարելի չէ համարձակորեն ամբողջ Ռուսաստանին վերագրել՝ վորովհետեւ ներկա ընդունելությունը համաժողովրդակա՞ն և առանց ցեղերի խտրության պատկանում և ամենքին:

Պատմական յենք համարում այս որերն այն պատճառով, վորովհետեւ Թագաւոր Կայսրը, վորպես պետության զուլս, անձամբ ականատես է լինում այն մեծ պարտաճանաչությանն ու քաղաքացու պարտականությանը, վոր այս ծանր որերին ուստի հետ հավասարապես ցույց են տալիս և ալլադգի ու ալլակրոն տարրերը: Թագաւոր Կայսրը տեսնում է Թե ինչպես հայրենիքի համար Կովկասի ժողովուրդները մեծ սիրով տանձնում են ամենածանր զոհաբերություններ:

Թագաւոր Կայսեր այցը Կովկասին մեծ նշանակություն կունենա մեր ծայրերկրի համար վորովհետեւ վորքան հաճախ Կովկասը արժանանա իր կայսեր տեսության, որքան հաճախ և անմիջորեն կարողանա ներկայացնել իր իղձերն ու ցանկություններն:

տության, ի դեմս այն հալածանքների լուրերի, վորի զոհերն յեղան կրկին Տաճկաստանի հայերը:

Ամեն անգամ, յերբ Ֆրանսիան հնար ե ունեցած, ի նկատի ունենալով ներկայիս պայմանները, հզորապես արտահայտելու հայ ազգին յուր խնամքը, հասարակապետության կառավարությունը հոգածու ե յեղած նոցա զորավիգ լինել և մեղմել նոցա տարաբազդ վիճակի խստությունը: Չերդ սրբությունը կարող ե վստահ լինել և հավատացած, վոր դաշնակից պետությունների համահաճությամբ, այս միևնույն զգացումներով կը ձեռնարկե նա հայ ժողովրդին ընձեռելու որիննական հատուցումներ, յերբ հանգամանքներն այդ ներելու լինին:

Հաճեցեք ընդունել ջերմ հարգանացս հավատարմքը, վորով պատիվ ունի կալ,

Տեր,

Չերդ սրբության

Ամենախոնարհ և ամենահնազանդ ծառա

Ս. Բրիյան

Փարիզ. 12 մարտ 1916 թ.

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՏԱՐ ՆԻԿՈԼԱՆ.

Արտատպում ենք Դաշնակցության կենտրոնական որդան «Հորիզոնից» (1917 նոյեմբեր 27 № 265) այն առաջնորդողը, վորով մեր ազգային հեղափոխականներն վողջունում եյին արյունոտ Նիկոլային: Թիֆլիս 27 նոյեմբերի.

Պատմական ուրե.

Թիֆլիսն այս քանի որն պատմական որեր ե ապրում:

ըր իր քաղափորին, այնքան շուտ կը պատկզեն նրատենչերը,

Առանձնապես զալով հայերիս, կասենք, վոր ներկա բարձրագույն այցը Թիֆլիս և Ռուս-Թրքական սլատերազմի վայրերը ավելի քան պատմական և մեզ համար, վորովհետև այս ծանր որերին, յերբ հայ ժողովուրդը իր նվիրական ու պատմական իղձերի իրագործումը կապում և Ռուսաստանի հետ, հզոր Ռուսաստանի կայսեր այցը հայաշատ վայրերը միմիայն բերկրանքով ու ցնծությամբ կարող և լիցնել հայ ժողովրդի սիրտը:

ՀԱՅ ԱԶԳԱՍԵՐՆԵՐԸ ՅԵՎ ՑԱՐ ՆԻԿՈԼԱՅԸ.

Սամսոն Հարությունյանի նառք ցար Նիկոլային:

Ձերդ կայսերական մեծություն,
վոդուրմած քաղափոր:

Մեր յերջանկությունը անսահման և կատարվեց վաղեմի և ջերմ ցանկալին — յերես առ յերես տեսնել ձեր մեծությունը, մեր սիրեցյալ թագափորին: Գլուխ յենք խոնարհեցնում ձեր մեծության առաջ:

Հայ ազգաբնակչության մի պատգամավորյուն արկանում և հոտս ձերդ մեծության հավատարիմ հըպատակային անձնվիրության զգացումները և համարձակություն և առնում հավաստիացնել, վոր մեզ համար այս պատմական որում ամբողջ հայ ժողովուրդը ամբողջ հոգով մասնակից և մեր ուրախության:

Պատմությունը այդ հն քրւյնագոխատոնյա ժո-

զովրդին, վոր կրել է շատ վիշտ և տանջանք դրացի-
ներէց Ասիայում քրիստոնեական հովատի համար,
հրահանգում է, վոր միայն Ռուսաստանը յեզ նրա
քաղաքի միապետները հովանավորել յեզ պաշտպանել
յեն յեզ ինչպես նրանք պաշտպանել են յեզ այլ քրիս-
տոնյա ժողովուրդները Յւրեմիայում, վորոնք ստացան
ազատութիւնն ռուսական զենքի ուժով:

Յեզ այժմ, յերբ փառապանծ ռուսական զորքը
իր վեհապետ պարագլխի կամֆով կոչում է Հայաս-
տանի ձյունապատ բարձրութիւնների վրա յեզ Ս. Լաւ-
կերտի լայն հովտում Թուրքիայի դեմ, վոր հանդգնեց
Դերմանիայի դրդամար, ձեռք բարձրացնել հզոր Ռու-
սաստանի վրա, հայերը, հետեւելով իրանց նախնյաց
պատգամներին, վտարի յեւան իրրն մի մարդ պատ-
րաստակամ, ինչպես և ձեր մյուս հովատարիմ հըպա-
տակները, զոհել իրանց կյանքը և զույգը ի փառս
մեծին Ռուսաստանի և դահի:

Թուրքիայի հետ պատերազմելու լուրը հուզեց
ամբողջ հայկական ժողովուրդը: Մահն յեկրներէց
հայերը շապում են մահել ռուսական փառավոր
գինգութության շարքեր, յեզ իրանց արյունով ծառա-
յել ռուսական զենքի ազատության:

Ազոթում յենք ամենաբարձրյալ աստծուն առա-
քել հաղթութիւնն թշնամիների վրա արեւմուտքում և
արեւելքում: Մեր սրտերը լցված են ջերմ ցանկութեամբ
վոր մեր Թանկագին հայրենիքին բաժին ընկած փոր-
ձանքը սովորովի ռուսական զենքի նոր փառքով և

*) 1914 նոյեմբերին Նիկոլա ցարը յեկել ևր Կով-
կաս: Յարին վողջունել են առանձին հասերով Ս. Հա-
րութիւնյանը, Մեօրոր յեպիսկոպոսը և Ստեփանը:

Ռուսաստանի պատմական խնդիրների լուծմամբ արեւելքում:

Թող ազատ ծածանի ռուսական զրոգը Բոսֆորի յեւ Դարդաֆենի վրա:

Թող, մեծ քաղաւոր, ձեր կամքով ազատւոյուն սահման քուրֆական լուծի ճակ մնացած ժողովուրդները:

Թող հարութօյուն առնե, Ռուսաստանի հովանաւորության ներքո, դեպի շոր ազատ էյանք, քրիստոսի հաւատի համար տանջվող հայ ժողովուրդը թուրքիայում:

Պատգամաւորությունը խոնարհ յերկրպագում և ձեր մեծության և ամբողջ հոգով ցանկանում և ձեզ և ձեր ոգոստափառ տանը յերկարակեցություն ի փառս և ուրախություն ամբողջ Ռուսաստանի:

Յ. Լեփսանգը Խաթայանի ճառը

Նոյեմբեր 27

Մեծ Արքա.

Դուք յենք խոնարհում Ռուս հողի ինքնակալ Տիրոջ առաջ:

Մենք, Թիֆլիսի քաղաքային ինքնավարության ներկայացուցիչներս, անհափ բախտաւոր ենք այն գիտակցությամբ, վոր հանդիսանալով վորդիներ կովկասի սիրտ Թիֆլիս քաղաքի, վորի մեջ կենտրոնացած և յերկրի գլխավոր ժողովուրդների հոգեկան վողջ կյանքը տեսնելով առաջինը մեր սիրելի միապետին, դուռն յենք անընկճելի պահանջ մեր սրտի ամենայն ջերմությամբ մեր խորին հովատարիմ հպատակության ըզ-

դացուհիները արտահայտել մեր անբաժան թանկագին հայրենիք Մեծ Ռուսաստանի Մեծ Պետին...

Մեծ Ե Ռուսաց յերկրի Աստվածը:

Հաստատ հավատով դեպի Ռուսաստանի անպարտությունը, նրա անսպառ ուժերը, դեպի մեր Մեծ կայսրը տածած բուռն սիրով, մենք՝ միացած մեծամունքով յեվ ռազկապված քափվող արյունով—սալիս յեմ հանդիսավոր յերգում չը սպառելու մեր հոգու ուժը մինչեմ վոր մեր պանծալի հաղթական զորքը ընդմիշտ չը ջախջախե նենգ քեռամուն և դրանով առավել ևս մեծացնե մեր Մեծ հայրենիքի ուժը և զորությունը: Խոնարհվում յենք սիրեցյալ թագավորի առաջ, և կեցցեն թագավոր կայսրը, թագուհի կայսրուհիները և արքայազն դահաժառանգը:

Ուռն թագավոր կայսրին:

ԽԱՏԻՍՅԱՆԻ ՃԱՌԸ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-ԻՆ

Մեծդ թագավոր:

Յերկար տարիներ մեր հինավուրց քաղաքի ազգաբնակչությունը սիրարորբոք ծառավի եր ռուսական երկրի թակագիր պետին յերես առ յերես տեսնելու բաղդին:

Այսօր հասավ մեզ համար անձկալի անմոռանալի ժամը.

Բաղդավորեցրեք մեզ, թագավոր վոտք ղնելով հինավուրց քաղաքի պատերը և տեսեք, թե ինչպիս բարախում են բազմացող ազգաբնակչության սրտերը մի բուռն ցանկությամբ—ամեն կերպ ձուլվել իր ցաթի հետ յեվ զոհվել նրա յեվ մեր մեծ քանկագին հայ-

րեցիքի համար: Շատ ժողովուրդներ են բնակվում մեր մեջ, շատ բառիառներով ենք խոսում մենք, բայց ամենքս զգում ենք մեզ յեղբայրներ և մի, անբաժանելի մեծ հայր Ռուսաստանի հարազատ զավակներ և հավատարմապես փառաբանում ենք Մեծն Յարին:

Դարերի ընթացքում բազում փոթորիկներ են անցել մեր գլխով, բայց նրանք սոսկ կոեցին մեր ույժը, և մենք, խոշոր փորձությունների և հանուն իրավունքի ու ազատության մղվող կռվի որերում համերաշխ ու ժխբան, մի սիրտ ու մի հոգի դարձած արկանում ենք առ ոտն մեր պաշտեցյալ միասփտի և խոնարհվում ենք մեր ինքնակալ պեռից:

Թող թույլ տրվի ինձ՝ Կովկասի սիրտ Թիֆլիս քաղաքի ներկայացուցչին, ամենահպատակորեն խընդրել Ձերդ մեծությունից բարեհաճել ընդունել մեր ջերմ հավատարիմ զգացմունքների արտահայտությունը և մեր Կովկասյան աղ ու հացը:

Բարի գալուստ, Սիրեցյալ Կայսր: («Մշակ» № 268 1914).

Գեվորգ IV-ի խոսքը

Ձերդ կայսերական մեծություն

Ամենամողորմած կայսր.

Անսահման բազդավոր եմ ես և իմ հոտը, վոր այս պատմական բուսեյին հնարավորություն ունենք յերես առ յերես տեսնելու մեր սիրեցյալ միասփեռ շրջապատված իր հավատարիմ ժողովրդով, վոր պատրաստ և հայրենիքի վառքի ու պատվի համար զոհել իր կյանքն ու ամեն կարողությունը:

Հայկազյան հավատարիմ հպատակ ժողովուրդը, սրբությամբ հետևելով իր նախնիքների պատգամներ-

ին, այժմ ել պատրաստ ե անձնագոհությամբ կա-
ռարեկ իւ սրբազան պարտականութիւննք իւ ցարի յեկ
հայրենիքի առաջ:

Մեծդ թագաւոր. հայ ժողովուրդը պատկառան-
քով ու խորագույն դիտակցությամբ կը յիշե այս
նշանավոր ուրը, յերբ Ձերդ կայսերական մեծությունը
բաղդավորեցրեց նրան իր ամենաողորմած ուշադրու-
թյամբ և բարեհաճեց այցելել մեր մայր յեկեղեցին,
այս տաճարը, վորի կամարի տակ հանգչում են անց-
յալ ռուս-թուրքական պատերազմի պանծալի հերոս-
ները:

Փորձության այս ծանր օրերին մեծ ե ու ան-
հողդողդ մեր հավատը, թե մեծն Ռուսաստանը իւ
անձնատուր զավակների սրբազան արյունով և իւ
բարոյական ուշի մեծությամբ հաղթող դուրս կը գա
և իր ինքնակալ պետի կամքով կը հաստատե իրավունք
ու արդարությունը Ամենակարող աստուծո սուրբ
սեղանի առաջ ջերմ աղոթքներ ենք վերառաքում ա-
մենաբարձրեալին շնորհելու լիակատար հաղթություն
ռուսական քրիստոնյա զորքին:

Թող պահպանե տեր աստվածը յերկար տարի-
ներ Ձերդ կայսերական մեծության, վողորմած թա-
գունի—կայսրունիների և սիրեցյալ արքայազն գահա-
ժառանգի թանկագին կյանքը: «Ամեն»:

2. ԻՆՉՊԵՍ ԵՐ ՀԱՅ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԸ «ՅՆԴԱՆՈՔԱՅԻՆ ՄԻՍ» ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵԶՄԻԱԾՆՈՒՄ.

Հայ կամավորները ս. Մշմխածնում.

«Ապրիլի 15—16-ը Ս. Եջմիածնում պատմական որեր եյին: 15 առավոտյան շորեքշաբթի որը լուր ըստացվեց, ուղարկված հատուկ սուրհանդակի միջոցով՝ վոր հայ կամավորների խումբը զալիս և Յերևանից, Վեհափառ Հայրապետը պատվիրել էր կարևոր պատրաստություններ տեսնել ընդունելու կամավորներին պատշաճ կերպով: Վեհափառի հրամանով ընդառաջ եյին գնացել մինչև Զվարթնոց ավերակ յեկեղեցին Տ. Աշոտ յեպիսկոպոս և Տ. Բարզեն վարդապետ: Հետըզնետե Յերեվանից բազմաթիվ կռուքեր յեկան Ս. Եջմիածին՝ Յերեվանի փոխ-թեմակալ Տ. Խորեն յեպիսկոպոսը, քաղաքագլուխ Պ. Ս. Խաչատրյանը և բազմաթիվ քաղաքացիներ մինչև Ս. Եջմիածին յեկել եյին կամավորներին ուղեկցելով: Ժամի 5-ի մոտերը Զվարթնոցի մոտ ճանապարհի վրա Վեհափառ² Հայրապետից ուղարկված ներկայացուցիչները և ժողովրդի խառն բաղմությունը շրջապատեց հայ կամավորների խմբապետներին:

*) Այս նկարագրությունը արտատպում ենք առանց վորևե փոփոխությունների կաթուղիկոսի պաշտոնական որպան «Արարա»-ից» (1915 թ. №4-5 ապրիլ մայիս): Այդ նկարագրության մեջ բավական լավ թընորոշվում է կաթուղիկոսի դերն իմպերալիստական մեծ պատերազմի ընթացքում:

Խմբապետներ Քեոին, Խեչոն, Դրոն, Համադասպը
 պլխավորությամբ բոլոր կամավորների հրահանատար
 Վարդանի՝ շարքով կանգնած և շրջապատված կամա-
 վոր զինվորներով—ծիավոր և հետիոտն, Արարատյան
 դաշտի պատմական վայրում մի սքանչելի պատկեր
 էին ներկայացնում։ Վեհափառ Հայրապետի լեզվ
 Մայր Աթոռի միաբանության կողմից զգացված վող-
 ջույնի ճառեր առատանցեցին Տ. Առաքյալի կողմից
 լեզվ Տ. Ռաբկեն վարդապետը, իսկ Վաղարշապատի
 ժողովրդի կողմից պ. Հովհաննես Մուշեղյանը։ Ճառե-
 րին պատասխանեց խմբապետ Վարդանը։

Հանդիսավոր յերթը առաջ շարժվեց դեպի Ս.
 Եջմիածին։ Մինչև վաղի դուրը ժողովուրդը խանդա-
 վառ կեցցեններով դիմավորեց հայ բաջերին։ Փողոցի
 վրա գտնված տների պատշգամբներն ու պատուհան-
 ները զարդարված էին դրոշակներով։

Պատշգամբներից ծաղիկներ էին ցանում կա-
 մավորների վրա։ Մայր Աթոռի միաբանությունը
 վաղի դրսի դռան առաջ դիմավորեց խմբապետներին
 և կամավորներին, ուղեկցելով նրանց Տաճար։

Յեկեղեցու զանգակները դողանջում էին շատ
 խորհրդավոր կերպով—վանքի հնազարյան պարիսպ-
 ներն անգամ, վոր շատ պատմական դեպքերի լուռ
 վկաներ են, կարծես զգում էին բապշի խորհրդա-
 վորությունը։ Ժողովրդի և միաբանության աչքերից
 կաթիլ-կաթիլ արցունքներ էին թափվում, իսկ այդ
 արցունքները մարմնացման էին այն խորհրդավոր
 ճառ՝ սովորականից բոլորովին տարբեր, զգացմունք-
 ների, վոր մեզանից յուրաքանչյուրը կրում էր իր
 կրօնի տակ։ Արձանի լուռությամբ ամենքը իրենց

քայլերն ուղղեցին Ս. Տաճար, խմբապետները ծունկ չոքելով համբուրեցին Իջման ս. սեղանը, լուռ և խորհրդավոր կերպով աղոթում էին առ Աստված, իսկ միաբանությունը ու ժողովուրդն էլ նրանց համար էին աղոթում, վոր կարողանան քաջությամբ կռվել և հաղթել դարավոր ըոնակալ տաճիկներին, ազատելով մեր մայրերին, քույրերին ու յեղբայրներին պատմական տանջանքներից: Յերեկոյան ամբողջ ժամերգության ներկա էին նոքա: Ժամերգությունից հետո խմբապետները հատուկ պատրաստված սենյակներում հանգիստ առին: Կամավոր զինվորներին տեղավորեցին վանքի հյուրատանը, սեղանատանը, ճեմարանի ընդարձակ ննջարանում, ճեմարանի ներսի սենյակներում, նոր շինված մանկավարժական թանգարանում, գյուղի գալստական շինությանց մեջ: Ժամը 9-ին խմբապետները ներկայացան վեհափառ կաթողիկոսին: Վեհափառը որհնեց նրանց յեվ խոսակցեց, հյուրասիրելով սուրճով: Ժամը 9-ին բոլոր խմբապետները, հարյուրապետներն ու տասնապետները ընթրիքի հրավիրվեցին ճեմարանի սեղանատանը:

Ընթրիքին ներկա էին սր. աթոռի միաբանությունը, Յերևանից ուղարկված ռուս սպա Ոգով, պ. Համբարձում Մելիքյան, «իկին Զաբել եվ Դավիթ Զավրյան ամուսիններ եվ ուրիշները: Զգացված բաժակաճառեր առաջարկեցին տ. Սահակ արքեպիսկոպոս, Տ. Աշոտ յեպիսկոպոս, Տ. Բարկեն վարդապետ, Տ. Դրիգոր. խմբի խաչակիր քահանան, Զավարյան, Ոգով և ուրիշները:

Տ. Սահակ արքեպիսկոպոսն առաջին կենացն առաջարկեց նորին կայսերական մեծության և ամ-

բողջ Ոգոստափառ Տան կանացը: Ողբ թնդաց կեցցե-
 ներով: Խմբապետ Վարդանը առաջարկեց խմել Վեհա-
 փառ Հայրապետի կենացը, ամենքը վոտքի կանգնե-
 լով խանդավառ կեցցեհներով խմեցին Վեհափառ Հայ-
 րապետի կենացը, մի շարք բարեմաղթություններ
 անելով: Հսկա ընթրիքը վայելելուց հետո խմբապե-
 տերը գնացին հանգստանալու: Մյուս բոլոր զինվոր-
 ներին ևս տրվեց ընթրիք: Վաճճի յեվ նեմաբանի
 բակերում այդ յերեկոյան առանձին վոգեվորություն
 եր տեսնու: Դիւերը շատերը բուն չունեցին՝ յերգում
 յեվ ուրախանում էին: Մյուս առավոտյան վաղ
 ամենքն վոտքի վրա էին: Վեհափառ Հայրապետի
 հրամանով ճեմարանի ընդարձակ բակում պետք և
 կատարվեց կայսերական մաղթանք: Ժամը 8-ից քիչ
 անց ճեմարանի հարավային բակում բոլոր 4 գնդի
 Հայ ձիավոր և հետիոտն կամավորներն իրենց խմբա-
 պետներով, գլխավորությամբ Վարդանի, կազմ
 պատրաստ էին: Ճեմարանի հանդիսարանի դիմաց
 միաբանությունը շուրջառ առած սպասում եր Վեհա-
 փառ կաթողիկոսին: Վեհափառը քիչ հետո շրջապատ-
 ված յեպիսկոպոսներով յերևաց, ողբ թնդաց կեցցե-
 ներով:

Վեհափառն յեվս բարեհաճեց շուրջառ առնել,
 վսից հետո սկսվեց կայսերական մաղթանքը, ներ-
 կայությամբ խառն ժողովրդի: Ուղիղ վեհափառի
 առաջ կամավորներից մեկը բռնել եր գրեռակը, յե-
 ազույն՝ կարմիր, սպիտակ, կանաչ, վոսկեզոծ շեղ
 ծոպերով, հայերեն և ռուսերեն գրությամբ «Արմյան-
 սկայա Դրուժինա», ապա խմբապետները շարքերով
 կանգնում են: Բոպեն խորհրդավոր եր, յեղանակը պայ-

ծառ և ամենքի դեմքի վրա նկատվում եր բռնեցին տպավորութիւնը: Կատարվեց կայսերական մեղթանքը վորից հետո պետք և խոսեր Վեհափառը: Մի քանի վայրկյան լռութիւն տիրեց, գրիչը անդոր և արտահայտելու այն խորհրդավոր զգացմունքը, վոր տիրել եր բոլորին:

Ամենքի մեջ աչքի ընկնող յուր վեհությամբ ալեգարդ վեհափառը ընդհատեց այդ խորհրդավոր լռութիւնը և դառնալով հայ կամավորներին՝ իր հայրական խոսքն ուղղեց նրանց: Ձեփազանց զգացված եր վեհափառ Հալրապեան, յուրաքանչյուր խոսքն անեմբ լարված ուժադրությամբ լսում էին, հուզիչ յեմ ազգու էին վեհափառի խոսքերը, յեմ յերբ վեհափառն առաց զգնացեմ, Ձեզ եմ սպասում իմ օանջ ված զավակները, զնացեմ ազասեցեմ նրանց կոտորածից եմ վրեմխնդիր. մեր քցնամին մարդասիրության՝ սահմանից դուրս և յեկեմ այդ բռնեցին խմբապետներն եմ կամավորները կարծես կասադի առյուծ դարձան, նոքա ալեգարդ Հալրապեաի խոսքերից վոզեմորված ուզում էին քնել Յ. Բարառ լեռան մյուս կողմը և սկսե իրենց համար վաղուց պանծալի կատաղի կռիվը վայրենի քրդերի ու բռնակալ տանկի դեմ: Յուր ճառի մեջ վեհափառն որհնեց արեմիլյան օանջված լ ազգերի պատմական պատշապան Ռուսաց կայսրին ու նրա փառապանծ հերոս զորին, քաջալերեց հայ կամավորներին, վոր ուս հերոս զորի հեք քաջությամբ կռվեն ու Տանկի բռնակալ լուծը ընդմիշտ թոթափեն տանջված հայ ժողովրդից: Վեհափառի խիստ զգացված հայրական խոսքերից հետո ողջ թնդաց կեցցեններով: Ապա ճեմարանի կողմից խոսեց

Փառք ուս հերոսական զորքի ղեկավարին, հավիտենական հուշ նոցա հիշատակին, վորոնք իրենց կյանքը զոհեցին արդարության հաղթանակի համար:

Ազոթում եմ առ ամենաբարձրյալը նորանոր հաղթություններ պարգևել հաղատություն հայ տառապյալ ազգի տաճկական լծից:

Այսօր եջմիածնի նախաթոռ ժամարում սուրբ պատարագից հետո գոհաբանական մաղթանք կատարեցինք ամբողջ միաբանական ուխտի հետ, ազոթավոր ժողովրդի մեծ բազմության ներկայությամբ:

Գևորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց:

ՊՈՂՈՍ ՓԱՇԱ ՆՈՒՐԱՐԻ ՆԱՄԱԿԸ

Գեվորգ կաթողիկոսին.

...Սորապես զգացված եմ և շփոթահար այն բզաջումներուն համար, վոր ձեր և ոծությունը բարեհաճած ե արտահայտել 20 փետրվարի ամսաթիվ հայրապետական բննազիր կռիվներին մեջ:

Ձերդ վեհափառությունը կը հայտնե ինձի իր գոհունակությունն ու ինձի վստահված պաշտօնը կասարելու մասին քա՛մ ջանքերը կը զննահան, այնպիսի բարեյաջակամ ներողամտությամբ մը վոր սրտիս մեջ միշտ բանդակված պիտի մնա:

Յեվրոպիո մեջ ձեր վեհափառությունը ներկայացնելու պաշտոնին կոչելով զիս, իբրև ազգային պատվիրակության նախագահ, պետություններեն, ինչպես յեվր. դուռնեն պահանջելու համար Բերլինի դաշնագրով խոստացած բարենորոգումներու գործադրությունը — վոր միայն կրնա վերջ մը դնել Ասիական թուրքիո

մեջ մեր հայրենակիցներուն տառապանքներուն,—
 ձեր ս. ոծությունը իր վստահության թարկարժեք ա-
 պացույցը կուտար ու ինձի կը հանձնէր պաշտպանու-
 թյունը այնպիսի դեղեցիկ դատի մը, զոր չէի վստա-
 հիլ ընդունելու, հակառակ գործին զժվարությանց, զոր
 ինձի համար խսկապէս ծանոթ կզգայի:

Պարագանքը բարեբախտաբար ողնեցին մեզի
 յեզ Կեսուքյունները, Ռուսիո վեհաճնն նախասե-
 նուքյամբ, հաճնն առին Եւթ Տալ մեր արդար պա-
 հանջներուն, առաջին ատենիւ համար կնճիւններու
 յեզ պատահականությանց վորոնցմէ կզգուշանան:

Սակայն ներքի ինձի հիշել հոս, վոր ամեն բանն
 առաջ, ձեր վեհափառության իմաստուն քաղաքակա-
 նության հայտադրին Հափաւորությանը և վեհանձն
 ջանադրությանց շնորհիւ է, վոր Ն. Ա. ցարին կա-
 ուավարությունը մեզի շնորհեց իր հզօր պաշտպանու-
 քյունը, յեզ վոր, ձեռք առնելով մեր դատը, իրեն հե-
 մդեց նայել մշուս դահլիճները: Բոլոր Յեզրոպիո միա-
 համուռ գործողությանց մասին կայացած այդ համա-
 ձայնությունը, զոր մեր հայրենակիցներուն հալածանք-
 ները և հանուն մարդկության յեղած կոչերը յերևուն
 հինգ տարիէ ի վեր անբավական յեղած ելին գոյաց-
 նելու, մենք այսօր կպարտինք այդ շահուն, զոր պե-
 տությունները առավելապէս ունին Յեզրոպիո խաղա-
 դության պահպանումին տեսակետով:

Անոնք ըմբռնեցին արդարեւ, վոր հայկական
 նահանգներու խղճալի վիճակը չեր կրնար ավելի յեր-
 կար ատեն տնվել առանց ծանր վտանգներու, վորոնց
 է առաջը կարելի կըլլար առնել միայն բարենորոգում-
 ներու գործադրությամբ:

Ասիկա յեղալ մին այն գլխավոր փաստերեն զոր վեր հանեցի դահլիճներին մոտ հայցելու համար իրենց միջամտությունը, և չափազանցում պիտի չըլլար ըսելու թե այդ շարժառիթն ե՛վոր վորոշեց իրենց դուրս գալու այն անտարբերություններեն, զոր իրենց քաղաքականությունը ցույց տված եր մեր բարենորոգումներու նկատմամբ Բերլինի դաշնագրեն ի վեր:

Բայց պետությունները չե, վոր շահ ունեյին Հայաստանի մեջ բարենորոգումներու գործադրումին մեջ, Թուրքիա բարեբախտաբար շատ ավելի անմիջական շահ մը ունեւր:

Բ. Դուռը համոզվեցաւ վոր պետությունն իսկ պիտի վտանգվեր վորքան մեջ տեղեն չեր վերցնէր խռովությանց եւ ոտար միջամտությանց բոլոր հավանականությունները, Հայկական նահանգներուն մեջ կարգապահությունն յեւ արդարությունը վերահաստատելով:

Սակայն անիկա հասկցաւ, վոր բարենորոգումները պետության զորացումին և վերականգնումին ասլահավագույն միջոցը պիտի ըլլային, և անտարակույս այս բանն և առավելապէս վոր վերջնական համաձայնությունը գոյացնելու ծառայեց... Ձեր սրբությունը թույլ պիտի տա ինձի հիշատակելու նաև եւ մասնավորապէս, մեր բանակցությանց հաջողության նպաստող ազդակներուն մեջն, վոր այն կատարաւ միութիւնը վստահ-ապացույցը զվին շատուակ ամեն յերկիրների հայերը, այն որեն սկսաւ վոր ձերզ վեհափառութիւնը ստանձնեց նախաձեռնութիւնը պետութեանց ներկայացնելու իր ժողովր-

դիմ արգար պահանջները... Զերդ ս. ոժությունը փա-
փաք հայտնում ե վոր, պետք յեղած ատեն, շարու-
նակեմ աշխատել իբր ներկայացուցիչը հայաբնակ նա-
հանգներու մեջ բարենորոգումներու հաջողության
համար:

Վստահության այս նոր արտահայտության հան-
դեսը ջերմապես զգացված եմ, և թեպետ վորոշած էյի
առաջին պաշտոնս լրանալուն Յեզիսուտոսի մեջ հան-
գիստ առնել, մանավանդ վոր մեծ պետք ունեմ, բայց
կապահովցնեմ ձեր վեհափառությունը թե իմ ոժան-
գակությունս յերբեք պիտի չի խնայեմ, և թե անմի-
ջապես վոր Յեզրոպա դառնամ, դեսլի հունիսի կիսուն
ինքզինքս սիրահոժար պիտի տրամադրեմ ձեր վեհա-
փառության կատարելու համար որ ե պաշտոն, վոր
ոգտակար պիտի համարեք վստահել ինձի:

Կը խնդրեմ ձեր վեհափառութենեն վոր, Իմ ան-
խախտ յերախտագիտության հետ բարեհաճեք ընդու-
նել իմ խորապես անձնվեր և հարգալից զգացումնե-
րուս նորոգ հավաստիքը:

Պողոս Նուբար.

(արտատպ. Արարատ. 1914 № 5 մայիս
էջ 404-406)

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220033461

(694)

A ii
33461

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

Դիրքը տպագրված է Պրիպրաֆորեցտի I-ին տպարանում,
Ճապիկ տպագրված է Պետրոստի II-րդ տպարանում,
Ճապիկը նկարել է Հակ. Կոչոյան,